

ՌՈՅԱՆԻ «ՏԱՐԱԾԱՆԳՐԱՆԻՆ ՄԵՋ ԵՐՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԼԱՐՈՒԾՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌ ԿԸ ՀԱՆԴԻՍԱՆԱՅ»

Իրանի Նախագահ Զասան Ռոհանի շեշտեց, որ տարածաշրջանի ամբողջական ապահովությունը կարելի կը դառնայ միայն այն պարագային, երբ Օմանի ծովը, Արաբական Շոցն ու Յերմեո նեղուցը նաևարկումի միջազգային ապահով ճամբայ կը դառնան:

Թեհրանի մեջ, Օմանի արտաքին գործոց նախարար Իսեֆ պըն Ալեուիի ընդունելության ընթացքին Ռոհանի ըսաւ. «Երոպական ուժերուն ներկայությունը գլխաւոր պատճառն է լարուածութեան եւ տարածաշրջանի անկայունութեան: Տարածաշրջանի ներկայ դէպքերուն եւ լարուածութեան արմատները պետք է որոնել ԱՄՆ-ի միջուկային համաձայնութենէն դուրս գալուն ու անոր նախապաշարումներուն մէջ», յայտնելով, որ Իրան ինչպէս անցեալին, այսօր ալ լարուածութիւն հրահրող պետութիւն չէ. ընդհակառակը՝ ան կը ձգտի տարածաշրջանը զարգացնել եւ ապահովութիւնը ամրապնդել:



Ռոհանի յայտնեց, որ ճիշդապէս ներդրուած մէջ իրանեան քարտուղար շոքրեանին արգելափակումը ապօրինի արարք է եւ որեւէ ձեռնարկ տանալու համար պիտի չկարողանանք: Անոր համաձայն, Արաբական Շոցի, Յերմեո նեղուցի եւ Օմանի ծովի տարածաշրջանը անապահով պիտի դառնան նման ապօրինի արարքներու հետեւանքով:

Շար. Էջ 14 ➤

ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԱՌԵՒՏՈՒԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱԿՅԵՅՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊԵՐՄԱՆ ՀՈՐԳ

Սուրիոյ ներքին առեւտուրի նախարար դոկտ. Աթէֆ Նատտաֆ խորհրդակցական հանդիպում մը ունեցաւ Միասնական Ռուսիա Կուսակցութեան պատուիրակութեան հետ: Պատուիրակութեան կը նախագահէր Տիմոթի Պորիա:



Կողմերը գրուցեցին Սուրիոյ եւ Ռուսիոյ միջեւ տնտեսական գործակցութիւնն ու առեւտրական փոխանակութիւնը զարգացնելու միջոցներուն մասին: Անոնք կարելոր համարեցին երկու երկիրներուն միջեւ տնտեսական գործակցութեան նոր հորիզոններ բանալը, ինչ որ պիտի նպաստէ երկու երկիրներու յարաբերութիւններու ամրապնդումին եւ տնտեսութեան աշխուժացումին:

Կողմերը քննարկեցին վարչական քառերեք նախապատրաստելու կարելիութիւնն ու վարչական աշխատանքը զարգացնելու միջոցները:

Շար. Էջ 14 ➤

ՍՈՒՐԻՈՅ ԲՈՒՐ ՆԱԶԱՆԳՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՍԿԻՉԲ ԱՌԱՎ ՊԱՔԱՆՈՒՄԻ ՊԵՏԱԿԱՆ ԼՐԱՅՈՒՅԻՉ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Երկուշաբթի, 29 Յուլիս 2019-ին, սկիզբ առաւ 2018-2019 ուսումնական տարեշրջանի երկրորդականի աւարտական կարգի՝ պաքալորիայի պետական լրացուցիչ վերաքննութիւնը՝ գիտական եւ գրական ճիւղերով: ՍԱՆԱ յայտնեց, որ 693 կեդրոններու մէջ ցարդ 110.000 աշակերտ-աշակերտուհի քննութիւն յանձնած է:

Վերաքննութիւնը կը շարունակուի մինչեւ Երեքշաբթի, 6 Օգոստոս 2019, իսկ գիտականը՝ Գորեքշաբթի, 7 Օգոստոս 2019:



Սուրիոյ Կրթութեան նախարարութեան քննութիւններու պատասխանատու տնօրէն Իւնէս Ֆաթի ՍԱՆԱ-ին յայտնեց, որ վերաքննութեան դիմում արձանագրած է 109.695 աշակերտ-աշակերտուհի: Նախարարութիւնը քննութեան հեզ աստի ընթացքը ապահովելու համար համապատասխան միջոցներու ձեռնարկած է:

ՍՈՒՐԻԱԿԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆՊԱՄՆԵՐԸ ՈՒՍԿՈՂՆԵՐՈՒՆ ԵՎ ԴՊՆԱԿԵԶՆԵՐՈՒՆ ԱՆՄԵՌ ՅԻՇԱՏԱԿԸ

27 Յուլիս Եր Կրկին, Սուրիահայ Երիտասարդական Միութեան անդամները Լիզ պոնի հերոսներուն յիշատակը ոգեկոչելու, անոնց համեստութեամբ, արիւթեամբ ու պահանջատիրական մեր պայքարին նկատմամբ տածած ապառաժեայ հաւատքով սնանելու համար ուղղութեան Ազգ. գերեզմանատուն, ուր որպէս անմահութեան խորհրդանիշ կը բարձրանայ Լիզ պոնի հինգին յուշակոթողը:



Այնտեղ, գերեզմանատան մէջ, կեանքի ու պայքարի, հայրենասիրութեան նպատակաւ երթի անմեռ հաւատքով հինգ հոգիներ կը թեւածեն օր ու գիշեր, լոյս կը սփռեն ու ապրող ներկայութիւն կը դառնան բոլոր ժամանակներու երիտասարդութեան համար:

ՍԵՄ-ականները նախ խունկ ու մոմ վառեցին Լիզ պոնի հինգին յիշատակին, ծաղկեպսակ գետեղեցին յուշակոթողին դիմաց:

Այնուհետեւ Անժելա Զաղլասեան իր ընկերներուն անունով սրտի խօսք արտասանեց, վերանորոգելով ու իստը երիտասարդական միութեան անդամներուն՝ Զայ Դատի հետապնդման ու սերունդներու իրագրման, պատմութեան իւրացման եւ ապագային նորովի հայեացքով ու հաւատքով, պատմագիտական եւ իրաւական տուեալներու պիտանակէն նայելու համար:

Շար. Էջ 14 ➤

ԱՐԳԱՒԻ ԲՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԽՏՐԱԼԻԱ

Արցախի Զանրապետութեան արտաքին գործոց նախարար Մասիս Մալիլեանի գլխաւորած պատուիրակութիւնը, Զայ Դատի Աւստրալիոյ Յանձնախումբին հրաւերով, աշխատանքային այցելութեամբ մեկնեցաւ Աւստրալիա:



Պատուիրակութեան մաս կը կազմէ Արցախի Զանրապետութեան Ազգային Ժողովի պատգամաւոր, ԶՅԴ Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեան:

Այցելութեան ընթացքին նախատեսուած է հանդիպումներու շարք մը Աւստրալիոյ պետական, քաղաքական եւ հասարակական գործիչներու, ինչպէս նաեւ հայկական համայնքային կառույցներու եւ հոգեւոր դասու ներկայացուցիչներու հետ:

Կիրակի, 28 Յուլիսին, Արցախի Զանրապետութեան պատուիրակութիւնը հանդիպեցաւ Զայ Առաքելական եկեղեցւոյ Աւստրալիոյ եւ Նոր Զլանտայի Թեմի Առաջնորդ Տ. Զայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանի հետ: Նոյն օրը Սիտնիի Զայկազուն մշակութային կեդրոնէն ներս տեղի ունեցաւ պատուիրակութեան անդամներու հանդիպումը հայկական երիտասարդական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ, որուն ընթացքին Մասիս Մալիլեան ներկայացուց Արցախի մէջ անկախ եւ ժողովրդա-

Շար. Էջ 14 ➤

Խմբագրական

ԻՏԼԻՊԻ ԹՆՃՈՒԿԸ

Կը թուի թե Իտլիայի ազատագրումը, սուրիական տագնապի աւարտական փուլին, շատ մը հարցերու լուծման պիտի առաջնորդէ: Այս իսկ պատճառով ազատագրումը այնքան ալ կախեալ չէ կողմէ մը, որքան տագնապին առնչակից բոլոր կողմերուն հետապնդած նպատակներէն:

Թուրքիան Իտլիայի հարցով մէկ կողմէն կը փորձէ արձագանգել ռուսական կողմին յորդորներուն, լուռ մնալով ռուսական օդանաւերուն Իտլիայի գիւնտակներուն ուղղուած յարձակումներուն ի տես եւ խոստանալով իրագործել Սոչիի պայմանագրութիւնը: Միւս կողմէն ամէն շանք ի գործ կը դնէ սուրիական բանակին յառաջխաղացքը կասեցնելու՝ մերթ Գօրակցելով զինեալ ահաբեկիչներուն, մերթ քրտական գործօնի տկարացման պատրուակով Սուրիա-Թուրքիա սահմանին վրայ աւելի քան 80.000 զինուոր տեղակայելով, պատեհ առիթին Սուրիոյ ուղղութեամբ զինուորական մեծ գործողութեան մը ձեռնարկելու հեռանկարով:

Իսկ ինչպիսի՞ լծակներ կ'օգտագործէ Միացեալ Նահանգները: ԱՄՆ-ի Թուրքիա-Սուրիա սահմանին վրայ, այսպէս կոչուած, ապահովական գօտի յառաջացնելու Թուրքիոյ հետ համաձայնութեան ձգձգումը կը պարզէ ռուս-թրքական մերձեցումը անվստահելի գարգացում համարելու ԱՄՆ-ի կողմնորոշումը, եւ քրտական խաղաքարտը չկորսնցնելու վերջինսիս հեռանկարը: Ռուսիոյ կողմէ «Էս-400» հակաօդային պաշտպանութեան համակարգերու Թուրքիոյ մատակարարումը եւս բնականաբար անպատիժ պիտի չմնայ ԱՄՆ-ի եւ ՆԱԹՕ-ի կողմէ: ԱՄՆ շրջանին մէջ իր ազդեցութիւնը պահելու համար առաւելաբար կը վըստահի իր քիւրտ համախոհներուն, միեւնոյն ատեն համաձայնութեան եզրեր որոնելով Ռուսիոյ հետ: Վերլուծաբաններ կը հաստատեն, որ Իտլիայի ազատագրման պարագային, ԱՄՆ-ի մտավախութիւնը սուրիական բանակին Սուրիոյ արեւելեան շրջաններու ազատագրման ուղղուելու հաւանականութիւնն է առաւելաբար: Զետեւաբար Իտլիայի ազատագրման ուշացումը ձեռնուու է Միացեալ Նահանգներուն:

Այնուամենայնիւ, մարդկային զոհերն ու օգտագործուող գաղթականները ամենէն ողբալի պատկերը կը կազմեն այս հարցին: Թուրքիա վերջին շրջանին սկսած է օգտագործել նաեւ սուրիացի գաղթականները: Սուրիացի գաղթականներ բռնի կերպով Իտլիայ ուղղելով, թրքական իշխանութիւնները Իտլիայի դէմ յարձակման մարդկային գործօնը լաւագոյնս կ'օգտագործեն, եւ տեղւոյն ահաբեկչական խմբաւորումներուն կը նպաստեն՝ բացառելով անոնց դէմ զինուորական գործողութիւնները:

Թրքական այս դաւադրութեան զոհ չդառնալու համար, Թուրքիա ապաստանած սուրիացի գաղթականներ կը նախընտրեն սուրիական բանակին հսկողութեան տակ գտնուող Քեսապի անցքէն Սուրիա վերադառնալ: Այս ալ հաւանաբար կը բացատրէ Քեսապի յարակից գիւղերուն ուղղութեամբ ահաբեկչական թրքամետ խմբաւորումներուն մերթ քնդ մերթ կատարած հրթիռակոծումները:

Վերոյիշեալ ազդեցիկ կողմերու միջամտութիւններուն կողքին, Իտլիայի ազատագրումը կ'ուշանայ քանի մը հանգամանքներու բերումով: Առաջինը՝ մարդկային զոհերու պատճառ չդառնալու եւ բանակցութիւններու ճամբով Իտլիայը ազատագրելու սուրիական բանակին նախագգուշութիւնն է: Երկրորդը՝ զինեալ ահաբեկիչներուն կողմէ տեղւոյն բնակչութիւնը որպէս վահան օգտագործելու կամ քիմիական զէնքեր օգտագործելով սպանդներ կազմակերպելու եւ սուրիական բանակը մեղադրելու նախկին փորձերուն կրկնութեան հաւանականութիւնն է: Երրորդը՝ թրքական կողմին Իտլիայի բնակչութեան պաշտպան հանդիսանալու կեղծ քարոզչութիւնն ու Թուրքիա-Սուրիա սահմանին վրայ կուտակած զինուորական ուժերուն շարժումը կանխելու սուրիական բանակին մարտավարութիւնն է:

Այսպիսի կացութիւն ստեղծուած էր նաեւ արեւելեան Զալէայի ազատագրման նախօրէին: Սուրիական բանակը, սակայն, նուազագոյն վնասներով ազատագրեց զայն, անյայտ ինչպէս ազատագրեց արեւելեան Ղութան:

Իտլիայը Թուրքիոյ վերջին խաղաքարտն է սակայն: Թրքական աղբիւրներու համաձայն, Թուրքիա կը ձգտի Իտլիայը միացնել «Եփրատի Վահան» եւ «Ձիթենիի ճիւղ» ծրագրերուն՝ իր համախոհներուն վերահիւսկողութեան տակ պահելու Զալէայ նահանգին պատկանող այս շրջանը եւս:

Այս բոլորին լոյսին տակ, Սուրիա նախ կը վերահաստատէ իր կըտրուկ մերժումը թուրք-ամերիկեան որեւէ փոխհասկացողութեան, որ Սուրիոյ գերիշխանութեան, հողի եւ ժողովուրդի միութեան դէմ բացայայտ ոտնձգութիւն է, ինչպէս նաեւ միջագային օրէնքի եւ ՄԱԿ-ի ուխտի սկզբունքներուն բացայայտ ոտնահարում կը համարուի, միւս կողմէն կը լծուի սուրիական գրաւեալ տարածքներու ազատագրումին, խաղաղ բնակչութեան ուղղուած հրթիռակոծումներուն կեղոնները ոչնչացնելու եւ երկրի գրաւեալ տարածքները քայլ առ քայլ ազատագրելով Իտլիայ հասնելու:

Սուրիական բանակին համբերութիւնը օգտագործողները Զալէայի եւ Ղութայի օրինակները աչքի առջեւ պետք է ունենան անպայման:

«Գ.»

-Զորքշարքի, 31 Յուլիս 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Թրքական Ժողովուրդներու Ժողովրդավարական Կուսակցութեան միացեալ նախագահ Սազայի Թամալի դատապարտեց Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի թշնամական քաղաքականութիւնը Սուրիոյ եւ Իրաքի հանդէպ, ինչպէս նաեւ ահաբեկչութեան նեցուկ կանգնիլը, ինչ որ պատճառ հանդիսացաւ բազմաթիւ սուրիացիներու տեղահանութեան:



Թամալի կուսակցութեան անդամներուն հետ հանդիպումի մը ընթացքին ըսաւ, որ Էրտողան ներկայիս Սուրիոյ, Իրաքի, Լիպիոյ եւ Միջերկրական ծովուն արեւելեան մասը գտնուող երկիրներուն մէջ պատերազմի շեփոխներ կը ինչեցնէ:

Թուրքիոյ իրավիճակին անդրադառնալով, Թամալի յայտնեց, որ Թուրքիոյ բոլոր հարցերը կը լուծուին, եթէ երկրին մէջ ժողովրդավարութիւն տիրէ, այսինքն՝ եթէ բոլոր ձերբակալուած քաղաքական գործիչները, լրագրողներն ու ակադեմիականները ազատ արձակուին, անոնց կողքին ժողովուրդներու ժողովրդավարական Կուսակցութեան 5000 անդամները, որոնք մինչեւ այսօր ձերբակալուած կը մնան:

-ՄԱԿ-ի մօտ Սուրիոյ մնայուն բանագնաց դոկտ. Պաշար ալ ճաֆարիի նախագահութեամբ՝ Սուրիոյ Զանրապետութեան պատուիրակութիւնը Ղազախստանի Նուր Սուլթան մայրաքաղաքը ուղղուեցաւ, մաս կ'ազմելու Սուրիոյ տագնապին շուրջ խորհրդակցութեան 13-րդ նիստին:



Նիստին Ռուսիոյ, Իրանի եւ Թուրքիոյ միջեւ խորհրդակցութիւն տեղի պիտի ունենայ Իտլիայի ճակատագիրին շուրջ: Զաղաքը մինչեւ այսօր զինեալ ահաբեկչական խմբաւորումներու վերահսկողութեան տակ կը մնայ:

Զաւանական է, որ սոյն նիստին Անգարայի վրայ ճնշում բանեցուի, որպէսզի Սոչիի մէջ Ռուսիոյ հետ իր համաձայնագիրը գործադրէ՝ Իտլիայի մէջ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն աջակցութիւնը դադարեցնելով եւ սուրիական տարածքներէն թրքական ուժերը դուրս բերելով:

-Երկուշաբթի, 29 Յուլիս 2019-ին, ռազմական աղբիւր մը յայտնեց, որ սուրիական բանակը իր վերահսկողութեան տակ առաւ Թալ Մալաի եւ Ճարին գիւղերը, զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն թաքստոցներն ու զինամթերքը ոչնչացնելու եւ զիրենք նահանջի մղելու ետք:



-Զովանաւորութեամբ Սուրիոյ Կրթութեան Նախարարութեան, 30 Յուլիսին Դամասկոսի Օփերայի տան մէջ տեղի ունեցաւ «Լեզուներու եւ Արուեստի Կրթական Փառատուն»ը, որուն մասնակցեցան Սուրիոյ զանազան վարժարաններու թեկնածուներ:



Փառատունին մասնակցեցաւ նաեւ Ազգային Զարէն Եփփէ Ճեմարանը:

Միջվարժարանային փառատունի աւարտին, որ ունէր նաեւ մրցումի բնոյթ, Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանը Սուրիոյ ախոյեան հանդիսացաւ:

Ճեմարանը մասնակցած էր երկու խումբով. Անգլերէն մեներգ՝ Ակաբէ Ֆրանքեան, դաշնամուրի ընկերակցութեամբ Արմէն Ասայեանի:

Անգլերէն ուղերգ՝ Նայիրի Արապաթեան եւ Վանայ Արուշեան, պարի ընկերակցութեամբ Միհրան Ալաճաճեանի եւ Ժուլի Ղազալ Էլպըրի: Գեղարուեստական ներկայացումներու պատասխանատուն էր Ճեմարանի ուսուցչուհի տիկին Սեւան Սիսեռեան-Եղիայեան:

Լուրեր Հայաշխարհին

ՀԱՆԴՊՈՒՄ ԱՐՅԱՆԻ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ ՊԵՆՏԻՔՍԻ ԱՆՈՐ ԲԱՐՔԻ ԱԿՎԱՆԻ ԱՆՊԱՄԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐՔԱՊԵՏԻՆ ՇԵՏ

ՀՀԴ Եւրոպայի Հայ Դատի գրասենեակը կը հաղորդէ, որ իր նախաձեռնութեամբ, Արցախի Շահումեանի շրջանը ներկայացնող պատուիրակութիւնը այցելած է Պենթիքայի Ալսթ քաղաքը:

Պատուիրակութիւնը Ալսթ քաղաքի ակադեմիական համալսարանը կողմէ հրաւիրուած էր մասնակցելու տարեկան «Փիքքեյնկ» փառատօնին (որ Ֆլանտրիոյ շրջանի ամենէն յայտնի միջազգային ազգագրական փառատօնն է), ինչպէս նաեւ



ներկայ ըլլալու 26-29 Յուլիսին քաղաքին մէջ տեղի ունեցող մշակութային եւ մարզական ձեռնարկներուն:

Արցախի պատուիրակութեան կազմին մէջ էին Շահումեանի շրջանի վարչական կազմի ղեկավար Գագիկ Մարտիրոսեան եւ Զարվաճառի քաղաքապետ Սերգէյ Չիլինգարեան: Պատուիրակութեան կ'ընկերակցէին Եւրոպայի Հայ դատի գրասենեակի նախագահ Գասպար Կարապետեան, գրասենեակի գործադիր տնօրէն Հեղինէ Էվինեան եւ ծրագիրներու ղեկավար Աշխէն Ֆիքսովա:

Փառատօնի պաշտօնական բացման արարողութեան ժամանակ Ալսթի առաջին փոխքաղաքապետ Զարիմ վան Օվերմէյրէ, որ երկու անգամ այցելած է Արցախ, ողջունած է Արցախի պատուիրակութեան ներկայութիւնը:

Արցախի պատուիրակութիւնը ունեցած է բազմաթիւ մը հանդիպումներ, որոնց շարքին՝ Ալսթի ակադեմիական տարբեր կուսակցութիւններ ներկայացնող անդամներուն հետ: 29 Յուլիսին պատուիրակութիւնը հիւրընկալուած է Ալսթի քաղաքապետ Զրիստոֆ Տըհագի կողմէ: Հանդիպումի ընթացքին քննարկուած են գաւազան մը հարցեր արդիւնաւետ կառավարման, մշակութիւնը զբոսաշրջութեան մարզերուն մէջ փորձառութեան փոխանակման վերաբերեալ:

Շեշտելով Արցախի ժողովուրդին համար ապակերտուցած համագործակցութեան խիստ կարեւորութիւնը՝ ՀՀԴ Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբի նախագահ Գասպար Կարապետեան նշած է. «Արցախի համար այսպիսի յարաբերութիւններու ստեղծումը կարեւոր նշանակութիւն ունի Ատրպէյճանի կողմէ պարտադրուած մեկուսացման քաղաքականութիւնը կասեցնելու եւ երկու հասարակութիւններուն միջեւ համագործակցութեան հիմք ստեղծելու համար: Մենք երախտապարտ ենք մեր ընկերներուն, որոնցմէ է Զարիմ վան Օվերմէյրէն, մեր հասարակութիւններուն միջեւ կամուրջ հանդիսանալուն համար»:

Կարապետեան ակցելուցած է. «Մարդու իրաւունքները բոլորին համար նոյնն են՝ անկախ երկրի պաշտօնական կարգավիճակէն: Արցախի ժողովուրդին իրաւունքն է յարաբերութիւններ հաստատել միջազգային հանրութեան հետ եւ ինքզինք զգալ անոր լիարժէք անդամ»:

Այցելութիւնը հարուստ էր նաեւ մշակութային ձեռնարկներով: Փառատօնին մասնակցելէ

Շար. Էջ 12

ԱՐՅԱՆԻ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԴՊՈՒՄՆԵՐԸ ԱԿՏՐԱԼԻՈՅ ՄԵՋ

ՀԱՆԴՊՈՒՄ ԱԿՏՐԱԼԻՈՅ ԿԱՆԱՉՆԵՐՈՒ ԿՈՒՍԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՌԻՉԵՐՏ ՏԻ ՆԱԹԱԼԻ ՇԵՏ

Արցախի Հանրապետութեան Արտաքին գործոց նախարարութիւնը կը տեղեկացնէ, որ 30 Յուլիսին Աւստրալիոյ մայրաքաղաքի՝ երկրի Դաշնային խորհրդարանին մէջ Արցախի արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեանի գլխաւորած Արցախի Հանրապետութեան պատուիրակութիւնը հանդիպում ունեցած է Աւստրալիոյ Շերակոյտի անդամ, Աւստրալիոյ Կանաչներու կուսակցութեան առաջնորդ Ռիչըրտ Տի Նաթալիէ հետ:

Մասիս Մայիլեան բարձրօրէն գնահատած է Արցախի Հանրապետութեան ժողովուրդի ինքնորոշման իրաւունքի ճանաչումը իրենց ծրագիրին մէջ ներառելու Աւստրալիոյ Նիւ Սաութ Ուելզ նահանգի Կանաչներու կուսակցութեան՝ Դեկտեմբեր 2017-ին ընդունուած որոշումը: Արցախի արտաքին գործոց նախարարը ընդգծած է, որ Արցախի միջազգային ճանաչումը հանրապետութեան արտաքին քաղաքական առաջնահերթու-



թիւններէն մէկն է, որ առանցքային նշանակութիւն ունի Արցախի ժողովուրդին՝ իրենց հիմնարար իրաւունքներու եւ ազատութիւններու լիարժէք գործադրման եւ շրջանին մէջ կայունութեան եւ երկարաժամկետ խաղաղութեան հաստատման համար:

Իր կարգին, ծերակուտական Տի Նաթալիէ շնորհակալութիւն յայտնած է նախարար Մայիլեանին ընձեռնուած աջակցութեան համար՝ ուղղակի տեղեկանալու Արցախի եւ շրջանին մէջ տիրող իրավիճակին մասին: Ան ընդգծած է, որ Աւստրալիոյ Կանաչներու կուսակցութեան համար արտաքին քաղաքական ոլորտին մէջ ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքի յառաջ մղումը առանցքային տեղ կը գրաւէ:

Հանդիպումին անդադարձ կատարուած է

Շար. Էջ 12

ԱԿՏՐԱԼԻՈՅ ԴԱՇՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԵՋ ՏԵՊՈՒՆԵՅԱԾ Է ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԵԱՆ

Արցախի Հանրապետութեան Արտաքին գործոց նախարարութիւնը կը տեղեկացնէ, որ 30 Յուլիսին Աւստրալիոյ մայրաքաղաք Բանայերայի՝ Դաշնային խորհրդարանին մէջ, Արցախի Հանրապետութեան պատուիրակութեան պատուին Աւստրալիոյ Հայ Դատի յանձնախումբի նախաձեռնութեամբ երեսփոխաններ Թրենտ Չիմերմանի եւ Ժոէլ Ֆիցցկիպընի կողմէ կազմակերպուած է ընդունելութիւն: Ընդունելութեան մասնակցած են Դաշնային խորհրդարանի ծերակուտականներ, երեսփոխաններ, որոնց կարգին՝ խորհրդարանի Ներկայացուցիչներու տան ութը մնայուն յանձնախումբերու նախագահներ եւ նախարարներ:

Երեսփոխաններ Թրենտ Չիմերման եւ Ժոէլ Ֆիցցկիպըն ողջունած են Արցախի Հանրապետութեան պատուիրակութեան այցելութիւնը՝ յոյս յայտնելով, որ անկախ հիմք ստեղծէ ապագային Աւստրալիոյ եւ Արցախի միջեւ կապերու խորացման, նաեւ՝ խորհրդարանական դիւանագիտութեան մակարդակով:

Պատասխան խօսքին մէջ Արցախի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեան գոհունակութիւն յայտնած է Դաշնային խորհրդարանին մէջ կազմակերպուած ջերմ ընդունելութեան համար եւ ներկայացուցած Արցախի Հանրապետութեան արտաքին քաղա-




քականութեան առաջնահերթութիւնները՝ անդրադառնալով Արցախի միջազգային ճանաչման եւ միջազգային գործակցութեան ընդլայնման հովովոյթներուն մէջ արձանագրուած արդիւնքներուն, դարաբաղեան տագնապի պատմական ու

Շար. Էջ 12

ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԸ ՀԱՆԴՊՈՒՄ ՌԻՆԵՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՓԱՊՍՈ ՌՈՏՐԻԿԵՉԻ ՇԵՏ

«Հորիզոն».- Երկուշաբթի, 29 Յուլիս 2019-ին, Մոնթրէալի Հայ կեդրոնին մէջ, Բանատայի Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչներ հանդիպում ունեցան Բանատայի ժամանակութեան եւ Մշակոյթի նախարար տիար Փապօ Ռոտրիկեչի հետ:



Մէկ ժամուան տեւողութեամբ հանդիպումին քննարկուեցան Հայ Դատի Յանձնախումբին յառաջիկայի ծրագրերը, այլ համայնքներու հետ փոխ յարաբերութիւններու ընթացքը, Հայաստան-Բանատա երկկողմանի յարաբերութիւններն ու քաղաքական գետնի վրայ յանձնախումբին առաջնահերթութիւնները:

Նախարար Փապօ բարձր գնահատեց Բանատայի հայ համայնքին ներդրումը՝ գաւազան ոլորտներուն մէջ, ինչպէս նաեւ նախարարութեան յառաջիկայ ծրագրերուն մասին մանրամասն տեղեկութիւններ փոխանցեց: Երկու կողմերը խոստացան շարունակել գործակցութիւնն ու երկխօսութիւնը՝ քննարկելու հարցերն ու քանադասի համայնքին վերաբերող ծրագրերը հետապնդելու ի խնդիր:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Բանատայի Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչ Միքէ Գարագաշեան, Հայ Դատի Օթթաուայի գրասենեակի գործադիր Սեւակ Պելեան եւ Հայ Դատի Շրջանային Յանձնախումբի անդամ Յարութ Դալիբեան:

ՆՇԱՐ

ԻՆՉ ՀՈԳԵՎԻՃԱԿՈՎ ԿՐ ԴԻՏԵՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ...



Ս. Մահաբեզեան

Ամերիկեան ու միջազգային լրատու աղբիւրները քանի մը օրը անգամ մը իրարու հետ մրցումի կ'ելլեն, աշխարհին «աւետելու» այն պատուհասները, որոնց կ'ենթարկուին իրենց երկիրներէն ԿԱՄՈՎԻՆ հեռացող գաղթականներ:

Ուրբաթ, 26 Յուլիսին, Միջերկ-

սիրական այլ միաւորներ, եթէ ըսենք՝ իւրաքանչիւր գաղթականի նուագագոյն կարիքները հոգալու համար պէտք է ծախսել գոնէ 5 տոլար, եւ թէ՛ ի վերջոյ ուրկէ՛ կը գոյանան նման գումարներ. «կողմակիօրէն» կարելի է նաեւ հաշուել, թէ նման կացութենէ շահ ապահովող-



րականի մէջ պատահած ծանրագոյն աղէտի մը արձագանգեցին տարբեր ցամաքամասերու լրատու աղբիւրներ. դէպքը եղաւ մարդկութեան հորիզոնը մթազնոող ու կարմիր ներկող Նորագոյն գոյժը: Ափրիկեցի շուրջ 150 գաղթականներ խեղճամահ եղած են, փոքրաթիւ ուրիշներ փրկուած են ու պատմած՝ իրենց ողիսականը: Անդին, բազմագոյն ողբերգական դէպքեր կը ներկայացուին լատին ամերիկեան երկիրներէ դէպի Միացեալ Նահանգներ խուժողներու, Կուաթեմալայէն դէպի Մեքսիքա, կամ անկէ Միացեալ Նահանգներ անցնիլ փորձողներու մասին. ականատես կ'ըլլանք թէ ինչպէս ոմանք գետերու մէջ ջրամոյն կ'ըլլան, ուրիշներ տաժանքի կը մատնուին ամերիկեան սահմանագլուխի գաղթականներու մէջ, հերթական մահեր կ'արձանագրուին: Այս բոլորը լուսանցքի վրայ կը ձգեն մասնաւորապէս ասիացի ու միջին արեւելքի այն գաղթականները, որոնք հարկադրաբար իրենց տունէն-տեղէն հեռացան վերջին տասնամեակներուն, հալածուած՝ իրենց երկիրները փոթորկող մարդակերտ աղէտներէն, որոնք յորջորջուեցան «քաղաքացիական պատերազմ» անունով, եւ գացին «ողողելու» եւրոպական երկիրներ:

Լրատուութեան կ'ընկերանան մեղադրական ու մեկնաբանական շիլ բացատրականներ: Կը մեղադրուին գաղթականներ շնորհուող-վաւոր երկիրները, նաեւ ՄԱԿ-ի այն ենթաբաժանումները, որոնք բաւարար աջակցութիւն չեն տրամադրեր գաղթականներուն: ՄԱԿ-ի ներկայացուցիչներն ալ չքմեղանքի կը դիմեն, յայտնելով, որ այսօր, աշխարհի տարածքին գաղթականներու թիւը անցած է 70 միլիոնը... (Թող մասնագետ հաշուապահներ մեզի ըսեն, թէ ՕՐԱԿԱՆ որքա՞ն գումարի կը կարօտին ՄԱԿ-ն ու մարդա-

ներու՝ չարաշահներու գանձանակները որքա՞ն կ'ուռնին):

Ոչ ոք կը խօսի թէ բազմատասնեակ միլիոնաւոր մարդիկ ինչո՞ւ տուն-տեղ ձգած՝ վերցուցած են գաղթականի ցուպն ու մախաղը եւ մատնուած՝ հայրենալքումի. լաւագոյն պարագային՝ յանդուգն լրագրողներ մակերեսային ակնարկութիւններ կ'ընեն այն մարդակերտ տաժանքներուն, որոնք ստեղծուած են տարբեր ցամաքամասերու վրայ, հարկադրելով պատմութեան մէջ նախընթաց չունեցող նման հոսանքներ: Իսկ թէ արդեօք աշխարհամարտերու օրերուն նման ալիքներ ստեղծուած են՝ այդ ալ ձգենք պատմաբաններուն: Իրականութիւնը այն է, որ հզօր պետութիւններու վարչամեքենաները իրենց կամակատարներուն վերածած ու սահման չճանչցող՝ շահամուլ «կայսրութիւններ», մինչեւ իսկ օրէնքներու մշակման ճամբով, գտած են նման վիճակներ յառաջացնելու եւ զանոնք առաւելագոյն չափով շահագործելու ձեւերը, մերթ՝ ժողովրդավարութիւն պաշտպանելու-տարածելու, երբեմն ալ թերաճները քաղաքակրթելու յոյսորտանքներով:

Ու բոլոր ցամաքամասերուն վրայ, իրենց պետական վարիչները ժողովրդավարական ճամբաներով ընտրած զանգուածները այս ողբերգութիւնները կը դիտեն այն հոգեվիճակով, որ պիտի ունենային ողբերգական կամ աղէտի մասին ժապաւեններ դիտողներ, վստահ ըլլալով, որ պատահաբար վրայ երեցող դերասանը իսկապէս չի մեռնիր, մինչեւ իսկ եթէ ան «չարի տիպար» մարմնաւորող է, ու պիտի երեւի այլ ժապաւենի մը մէջ, կամ... մրցանակաբաշխութիւններու պահուն, ինչո՞ւ չէ՛ նաեւ այն օրը, երբ անոր անունն շուրջ հիւսուի իրական կամ շինծու գայթակղութիւն մը:

ԱՐՏԱԳԱՂԹՆ ՈՒ ՆԵՐԳԱՂԹԸ ՄԵՐ ՏԱՆ ՆԺԱՐԻՆ ԿՐԱՅ...



Կարօ Արմենեան

Կը կարդամ Արմինէ Աւետիսեանի յօդուածը խառն զգացումներով: Հնդիկները այլեւս համալսարանի ուսանողներ չեն միայն երեւանի մէջ: Անոնք շահագրգռուած ներգաղթողներ են: Անոնք կ'ուզեն ապրիլ մեր երկրին մէջ: Անոնք կը սիրեն մեր երկիրը: Չայն կը նախընտրեն: Կ'ուզեն նոր արմատներ նետել հոն: Աճիլ եւ բազմանալ: Եւ 2017-էն ի վեր, Հայաստանի կառավարութիւնը հաստատած է վիզայի յատուկ *ntdhn* մը իրենց համար, որպէսզի դիւրացնէ իրենց մուտքը:

Յօդուածագիրը կ'ըսէ, թէ անցեալ տարուան մօտ 1.500 հոգիին դիմաց այս տարուան ներհոսքը արդէն մօտ 9.000 հոգի կը ներկայացնէ:

Այս տողերը կը գրեմ ըսելու համար հետեւեալը: Օտարագիւներու գաղթը դէպի Հայաստան դիւրաւ կուլ գացող երեւոյթ մը չէ Սփիւռքի հայուն համար, հակառակ այն իր-

նինք, որ այս անհանգստութիւնը կը բխի ոչ այնքան ներգաղթող օտարագիւներու հանդէպ խտրականութեան զգացումէ, այլ մեր երկրի լիւնելիութեան բացերէն: Ըլլանք անկեղծ մեկզմեկու հետ եւ խօսինք բաց բնագիրով: Առայժմ մենք այն երկիրը չենք, որ կարենայ հանգիստ սրբտով եւ մասնաւոր հանգիստ խրդճով իր դռները լայնօրէն բանալ օտարագիւներու գաղթին առջեւ: Եւ կը խնդրեմ՝ գիտ խնայեցէք բարոյական դասերէ: Չկայ երկիր աշխարհի վրայ, որ չունենայ ներգաղթի իր յատուկ քաղաքականութիւնը հիմնուած իր ազգային ներշնչութեամբ փաթեթին վրայ: Մենք անհանգիստ ենք, քանի որ յստակ չէ, թէ ի՞նչ է Հայաստանի Հանրապետութեան ազգային քաղաքականութիւնը օտարագիւներու ներգաղթի հաշուարկուած համեմատութիւններուն մասին:

Ներգաղթի երեւոյթը կարելի չէ կառավարել առանց համապար-



դութեան, որ ամեն սփիւռքահայ փաստօրէն կը վայելէ օտար երկրի մը (կամ երկիրներու) ասպնջականութիւնը... Մենք մտահոգ ենք մեր երկրի լիւնելիութեան (viability) հարցերով: Մենք մտահոգ ենք մեր հայրենակիցներու ծաւալուն արտագաղթով, որ լայնօրէն հետեւանք է մեր երկրի տնտեսութենէն ներս ամրացած մենաշնորհային համակարգին: Մենք մտահոգ ենք մեր ժողովուրդին համատարած աղքատութեամբ: Մենք մտահոգ ենք մեր երկրին պաշտպանական ոլորտի լուրջ բացերով: Օտարագիւներու աճող գաղթը մեզ կ'անհանգստացնէ բոլոր այս կնճիռներու բարդ փոխազդեցութեամբ:

Իմ ասպարեզին բերումով, ես մօտէն շփուած եմ հնդիկներու հետ: Ունեցած եմ գործընկերներ եւ ունիմ ազնուասիրտ բարեկամներ: Կը սիրեմ հնդկական վշակոյթը: Մեծ յափքշտակութեամբ ուսումնասիրած եմ Կանտիի շարժումը: Իմ երիտասարդութեան իտեալը եղած է ժաւահարլալ Նեիրուն: Բայց չեմ դադարի անհանգստութեամբ նայիլ հնդկական այս գաղթին:

Եւ այստեղ պիտի խոստովա-

փակ քաղաքականութեան: Ընդամենը երեք միլիոն հաշուող բնակչութեամբ, որուն վերարտադրական տոկոսները լրջօրէն խնդրայարոյց կը մսան (վերոյիշեալ բոլոր գործօններով) եւ որ կը դիմագրաւէ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի մեծ սպառնալիքները, մեր երկիրը պիտի անպայման հաշուի նստի ներգաղթի իրականութեան հետ եւ խստօրէն մանրակառավարէ (micro-manage) իր կենսքին այս կընճոտ ոլորտը:

Այստեղ խտրականութեան եւ ցեղապաշտութեան նկատումներ չկան: Այստեղ մակերեսային ժողովրդավարութեան լոզունգներուն համար տեղ չկայ: Աշխարհակարգը այնպիսին չէ, որ մարդ արարածը ունենայ տիեզերական անօտարելի իրաւունք իր ուզած երկրին մէջ անկաշկանդ հաստատուելու: Հայաստանը՝ ի՞նչ պիտի որոշէ, թէ որոնք են իր տրամաբանական սահմանները այս հարցին մէջ:

Պիտի փափաքէի, որ այս հարցը քննարկուեր լայն մասնակցութեամբ: Կը հրաւիրեմ բոլորը ձեր դատողութիւնը փոխանցելու՝ կանխայայտ շնորհակալութեամբ:

ԻՐԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

Վերջին ամիսներին Իրան յաճախակի է բարձրաձայնում երկրին դեմ ամերիկեան համակարգչային տարբեր յարձակումների աշխուժացման մասին:

Գրեթե կասկածից վեր է, որ Ուաշինգթոն-Թեհրան շահերի բեւեռացման այս փուլում կողմերը գործի են դնելու յաւելեալ եւ տարաբնոյթ ծակներ, առաջին հերթին՝ հետախուզական, խափանարարական ու համակարգչային յարձակումներ, որպէսզի յօգուտ իրենց փոխեն դէպքերի ընթացքը: Եւ այստեղ որեւէ անակնկալ կամ գարմանք յառաջացնող դրսեւորում չէր կարող լինել:

Առաւել ուշագրաւ էր այն, որ Իրան իր հետախուզական-հակահետախուզական եւ այլ բնոյթի գործողութիւնների աշխուժացման ու արդիւնաւետութեան շնորհիւ կարողանում է չեզոքացնել եղած սպառնալիքները: Ատուածի լաւագոյն վկայութիւնն էր, երբ 20 Յունիսին Թեհրան յայտնեց Իրանի տարածքում Իրանի Իսլամական յեղափոխութեան ջոկատի կողմից ամերիկեան Նաւատորմի MQ-4C Triton տեսակի ռազմավարական, հետախուզական նշանակութեան Աթս-ի խոցման մասին: Յատկանշական այն է, որ Աթս-ն, որն իրականացնում էր հետախուզական կարելոր առաքելութիւն, պէտք է որ գինուած լինէր հակառակադրային, քօղարկման համար անհրաժեշտ ժամանակակից ճարտարագիտական միջոցներով, որն այլ կերպ յայտնի է որպէս stealth aircraft: Անենք աւելին՝ MQ-4C Triton տեսակի ամերիկեան Աթս-ի 1 միաւորն արժէ 120 մլն. տոլար:

Ստացւում է, որ Իրան-Ամն յարաբերութիւնների ճգնաժամային այս փուլում, երբ կողմերն արդէն անցել են ուղիղ հարուածներ հասցնելու հռետորաբանութեան, եւ այնպիսի յեժ լեւտում, ինչպիսին Յերմէսի Նեդուցն է, թանկարժէք Աթս-ի կիրառումը պէտք է որ ունենար ռազմավարական կարելորութիւններ կայացնող հետախուզական առաքելութիւն: Սակայն ստացւում է այնպէս, որ ամերիկեան սարքը խոցւում է իրանական արտադրութեան Խորդադ-3 (Khordad) տեսակի գեղիթափոխային համալիրով: Յիշեցնեմ, որ այդ համալիրները կարողանում են միաժամանակ որսալ մինչեւ 4 թիրախ՝ 27 քմ. բարձրութեան վրայ:

Ամենեւին նպատակ չունենալով թերազնահատել Իրանի՝ հրթիռաշինութեան կամ, առհասարակ, ռազմարդիւնաբերութեան բնագաւառում ձեռք բերած նուաճումները, միեւնոյն ժամանակ, դժուար էր պատկերացնել նման միջադէպ: Այդ հարցում, առաջին հայեացքից, թերեւս տեղին էր գերազնահատել համաշխարհային առաջատար Ուաշինգթոնի ռազմական կարողականութիւնը: Հակառակ դէպքում մնում է միայն ենթադրել, որ գուցէ նախագահ Տանըլտ Թրամփին տրամադրուել են սխալ տեղեկութիւններ, որոնցում թերազնահատուել են Թեհրանի ռազմաճարտարագիտական կարողութիւնները:

Թերեւս անտեղի է շրջանա-

ռուող այն վարկածը, որը Ուաշինգթոն ի սկզբանէ ցանկանում էր հրահրել Թեհրանը, որպէսզի նա խայծը կուլ տայ, ջիղերը տեղի տան եւ խոցի ամերիկեան արտադրութեան սարքը: Ըստ վարկածի՝ իբրեւ թէ դա կ'ամրագրէր Իրանին ուղիղ ռազմական հարուածներ հասցնելու՝ ԱՄՆ-ի միջազգային իրաւունքը: Սակայն տեսնում ենք, որ ամերիկեան Աթս-ի խոցումից անմիջապէս յետոյ, Թրամփի շատ կտրուկ ու յարձակողական հռետորաբանութիւնը մեղմուեց յաջորդ յայտարարութիւններով:



րով: ԱՄՆ նախագահն արդէն խօսում էր, որ այդ գործողութեան հետեւում գուցէ կանգնած չէ Իրանը՝ որպէս պետութիւն, եւ որ գուցէ չի եղել նման մտադրութիւն, դա հաւանաբար, ըստ նախագահ Թրամփի, որեւէ իրանցի սպայի սխալ որոշման արդիւնք է: Սա խօսում է այն մասին, որ նշուած վարկածը, որ շրջանառւում էր որոշ փորձագիտական շրջանակներում, իսկապէս աւելին քան անհասկանալի է:

Անցնենք առաջ. Յունիսի կեսերին Թեհրան յայտարարեց, որ բացայայտել է ԱՄՆ Կեդրոնական Հետախուզական Վարչութեան համակարգչային լրտեսութեան նոր ցանց եւ ձեռքարկել որոշ գործակալների: Յստակեցւում էր, որ ԱՄՆ համակարգչային լրտեսութիւն ու համակարգչային յարձակումներ է իրականացրել այլ երկրներում նոյնպէս:

Յունիսի երկրորդ կեսին Թեհրան հանդէս եկաւ ԱՄՆ Կեդրոնական Հետախուզական Վարչութեան 17 գործակալի բացայայտման ու ձեռքարկութեան մասին յայտարարութեամբ: Իրանական աղբիւրների համաձայն՝ լրտեսների մի մասը դատապարտուել է մահապատժի: Այլ աղբիւրների հաղորդմամբ՝ նրանցից ոմանք արդէն ենթարկուել են մահապատժի: Իրանի հետախուզական տուեալներով՝ գործակալները վերապատրաստուել են ԱՄՆ համակարգչային յարձակումների, տեղեկութիւններ էին հաւաքագրում Իրանի ռազմավարական ու կենսական նշանակութեան նպատակներով, այդ թւում՝ միջուկային ու ռազմական ձեռնարկութիւնների վերաբերեալ: Արեւմտեան վերլուծական շրջանակներում Իրանի այս յայտարարութիւնը որակեցին որպէս յուզողուած ինչպէս ներքին, այնպէս էլ արտաքին լսարանին: Սակայն այս ամենում առանձնացնենք երկու անչափ կարելոր հանգամանք: Առաջին՝ մեր սահմանակից երկրի շուրջ ծաւալւում են իրադարձութիւններ, բայց առ այսօր շարունակւում է անհասկանալի մնալ ստեղծուած իրավիճակում: Հարց է յարուստանում՝ Յայաստանի դիրքաւորումը: Հարց է յարուստանում՝ նպատակայարարմար չէ՞ր այդ կապակցութեամբ որեւէ

նի այս յայտարարութիւնը որակեցին որպէս քարոզչական հնարք՝ ուղղուած ինչպէս ներքին, այնպէս էլ արտաքին լսարանին:

Սակայն այս ամենում առանձնացնենք երկու անչափ կարելոր հանգամանք: Առաջին՝ մեր սահմանակից երկրի շուրջ ծաւալւում են իրադարձութիւններ, բայց առ այսօր շարունակւում է անհասկանալի մնալ ստեղծուած իրավիճակում: Հարց է յարուստանում՝ նպատակայարարմար չէ՞ր այդ կապակցութեամբ որեւէ

Գ.Մ.

այդ թւում՝ Ատրպեյճանի տարածքով:

Կրկին յիշեցման կարգով՝ Թել Աւիւր չի էլ թաքցնում, որ գաղտնի տուեալներ է տրամադրում Թրամփի վարչակազմին. այդ գործողութեան հանրայնացման ժամանակ Նաթանիահուն չզլացաւ Նաեւ Նշել, որ Իրանի գաղտնի միջուկային ծրագրի վերաբերեալ Սպիտակ տանը փոխանցուած նիւթերը ամրապնդեցին Թրամփի որոշումը՝ դուրս գալ 2015 թուականին ստորագրուած՝ Իրանի միջուկային ծրագրի շուրջ պայմանագրից (Joint Comprehensive Plan of Action):

Եւ այստեղ գալիս է բարձրացուած հարցի երկրորդ կողմը՝ իսկ ի՞նչ կը լինի, եթէ հակամարտող կողմերը Հայաստանը նոյնպէս սկսեն դիտարկել կամ գուցէ արդէն դիտարկում են որպէս դիմակայութեան հերթական թատերաբեմերից մէկը:

Ամենեւին նպատակ չունենալով թերազնահատել մեր հետախուզական, հակահետախուզական ծառայութիւնների առարկայականութեան բաւական բարձր մակարդակն ու հմտութիւնները՝ չմոռանաւ, որ գործ ունենք համաշխարհային հիմնական խաղացողներից մէկի՝ Ուաշինգթոնի, միւս կողմից՝ տարածաշրջանային տերութիւն հանդիսացող Թեհրանի հետ:

Այս առիթով կրկին վերադառնանք Յունիսի երկրորդ կեսին Իրանի կողմից ԱՄՆ Կեդրոնական հետախուզական վարչութեան 17 գործակալի բացայայտման ու ձեռքարկութեան ճշգրիտ դէպքին: Մասնաւորապէս՝ ամսի 22-ին Իրանի հետախուզութեան նախարարութիւնը հանրայնացնում է վաւերագրական, փաստագրական ֆիլմ, որում ներկայացւում են Իրանի սահմաններից դուրս ԱՄՆ Կեդրոնական Հետախուզական Վարչութեան լրտեսների նկատմամբ իրանցի հետախույզների գործողութիւնները:

Իսկ ամենակարելորն այն է, որ ֆիլմում նկարահանուած գործողութիւնների ընթացքում ցուցադրուում են քատրեր, որոնք արուել են Հայաստանում:

Եթէ հիմնուենք ֆիլմի հաւաստիութեան վրայ, Իրան վերջին շրջանում աշխուժացրել է իր հետախուզական, հակահետախուզական գործունեութիւնը մերձտարածաշրջաններում, առաջին հերթին՝ Արաբական ծոցի երկրներում, Մերձաւոր Արեւելքում, ինչպէս նաեւ Հարաւային Կովկասի հանրապետութիւններում:

Դա, ըստ երեւոյթին, գարմանալի եւ անհնար մի բան չէ, հաշուի առնելով կշեալ տարածաշրջաններում Իրանի գալի ցանցային ազդեցութիւնը: Եթէ առաջնորդուենք այս ֆիլմում ներկայացուած տեղեկութիւններով ու դրանց տրամաբանութեամբ, ապա ոչ պակաս տրամաբանական հարց է առաջ գալիս՝ ֆիլմում ներկայացուած քատրերը, որոնք արուել են Հայաստանում՝ Երեւանում, ինչպէ՞ս են ընկալուում Թեհրանում: Արդե՞օք հիմնաւոր է այն տեսակետը, թէ մեր հարեւան

ՔԻՄՏ ՊԱՏՎԱՍՏԱՌ. «ԹՈՒՐԷԱՆ ՊԵՏԵ Է ԱՌԵՐԵՍՈՒԻ 1915-Ի ՊԱՏԱԶԱՍՏԵՐՈՒՆ ԶԵՏ»

«Էրմենիհապեր».-Թուրքիոյ քրտամետ ժողովուրդներու ժողովրդական (ԺԺԿ-HDP) կուսակցութեան Սիիրթ քաղաքէն ընտրուած ազգութեամբ քիւրտ պատգամաւոր Մերալ Դանըշ Պեշթաշ Սթըքիւլի մէջ մասնակցած է ասորիներու ցեղասպանութեան նուիրուած ժողովին:

Մինչ ժողովին մասնակցիլը, Պեշթաշ Շուէտի մէջ հանդիպած է ասորական համայնքի շարք մը կազմակերպութիւններու հետ, ընթացքին անդրադարձ կատարած է Հայոց Ցեղասպանութեան եւ երկրի մէջ Թուրքիոյ իշխանութիւններուն վարած քաղաքականութեան:



«Գոյութիւն ունի 1915-ի Ցեղասպանութեան հարցը: Պետք է առերեսուիլ անոր հետ եւ փորձել լուծում տայ: Կան Տերսիմի եւ շարք մը այլ կոտորածներ: Արեւմտեան լուրջ ներդրում պիտի ունենայ այդ հարցերու լուծման մէջ», ըսած է պատգամաւորը:

Այնուհետեւ ան անդրադարձած է Թուրքիոյ մէջ քրտական հիմնահարցին՝ դիտել տալով, որ թրքական իշխանութիւնները մինչեւ այսօր կը շարունակեն խտրական քաղաքականութիւն վարել քիւրտերու նկատմամբ:

Պեշթաշ եզրափակած է. « Դուք մինչեւ հիմա կ'արգիլէք քրտերէնը: Մինչեւ հիմա մայրենի լեզուով կրթութիւն կարելի չ'է ստանալ: Եօթը կուսակցութիւն լուծարած էք: Այս հարցերը պետք է լուծուին: Պետութիւնը պետք չ'է միջամտէ հաւատքի հարցերուն: Պետութիւնը հաւատք եւ կրօնք չ'ունի: Թուրքիոյ մէջ միակ բանը, որ ընդունելի է, քաղաքացի հասկացութիւնն է: Եթէ թուրք ես, սիւնի ես, մուսուլման եւ տղամարդ, ուրեմն ընդունելի քաղաքացի ես, իսկ, եթէ քիւրտ ես, հայ, ասորի եւ կիւն ես, ուրեմն ընդունելի չ'ես»:

ՎԱՆԻ ՄԵՋ ՊԵՂՈՒՄՆԵՐՈՒ ԸՆԹԱՅՔԻՆ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՐԶԱՆԻ ՄԱՐԴԱՎԱՅԻՆ ԿՄԱՆՔ ԶԱՅՆԱԲԵՐՈՒԱԾ Է

«Էրմենիհապեր».-Թուրքիոյ Մշակոյթի եւ Զբօսաշրջութեան Նախարարութեան արտօնութեամբ Վան քաղաքի հիւսիսարեւմտեան շրջանին մէջ կատարուած պեղումներու ընթացքին յայտնաբերուած է ուրարտական դարաշրջանի մարդկային կմախք:



Պեղումներուն մասնակցած են թուրք հնաբաններ՝ Իսթանպուլի համալսարանէն: Անոնց համաձայն, կնոջ կմախքը, որ եղած է առանց գանկի, 2700 տարուան է:

Աշխատանքները կատարուած են այն տարածքին վրայ, ուր գոյութիւն ունեցած է Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան:

Վանի տարածքին տարիներ շարունակ տեղի ունեցած են նման աշխատանքներ:

2017-ին Վանայ լիճի յատակը յայտնաբերուած է 3000-ամեայ պատմութիւն ունեցող ամրոց: Ըստ թուրք մասնագետներուն, այդ ամրոցը նոյնպէս կը պատկանէր Ուրարտական ժամանակաշրջանին:

ԼԱԹԱՔԻՈՅ ԱԶԳ. ՄՐԲՈՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ 9-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Մասնակցողներու թիւ՝ 33	Ցաշողածներու թիւ՝ 31	Ցաշողութեան տոկոս՝ 94%		
Ճորճ Մատանի	3066		Մայքլ Թիւթունճեան	2649
Անի Պետրոսեան	2985		Նայիրի Մուրատեան	2633
Սերլի Հանունիք	2949		Ժօէլ Մախուլ	2626
Իպրահիմ Տաւուտ	2987		Սերլի Գագընճի	2573
Լայալ Սալիթ	2878		Քրիստ Յովսէփեան	2510
Գեղարփի Նաճարեան	2848		Սելին Իսքէֆ	2345
Սատէ Ախրաս	2824		Ռաֆիկ Աստուր	2237
Յովհաննէս Զեօճէկեան	2748		Վահագ Պետուրեան	2213
Իպրահիմ Թիւրքմանի	2741		Ճէսի Մախուլ	2175
Անժէլ Իյտ	2737		Սերժ Պայտուն	2157
Ֆատի Պրիպիան	2714		Եուսէֆ Ալաճի	2097
Մարի Աբգարեան	2674		Սիրակ Աստուր	1890
Արվին Գաբթանեան	2662		Լեւոն Աշշի	1853
Ճորճ Մուրատ	2658		Սիւրի Ռուբէյան	1837
			Յովհիկ Զեօշկերեան	1763
			Ժագ Զըլգի	1749
			Ժագ Յակոբ Մաքիսեճեան	1644

Նոր գիւղի ՏԱՆԻՔՆԵՐԸ

Յակոբ Միքայէլեան

Անցեալ դարու կեսերուն ու կեսն բաւական ետք ալ, Նոր Գիւղի մէջ բազմաթիւ շէնքեր գրեթէ չկային. բոլոր տուները ընդհանրապէս երկ-յարկանի, բակով տուներ էին, որոնց տանիքները իրարու կպած, հարթակ մը ստեղծած էին: Անոր վրայէն կարելի էր դիւրութեամբ մէկ տանիքէն միւսը անցնիլ, նոյնիսկ եթէ անոնք ցանկապատուած ըլլային: Ամրան, երբ գիշերները հեղձուցիչ կը դառնային ու սենեակներուն մէջ քնանալը անկարելի կ'ըլլար, մասնաւորաբար ելեկտրական հովա-հարներու բացակայութեան, տանիքները կը դառնային ամենացանկա-լի ննջարանները, ուր իրար կողքի կը շարուէին անկողիները ու քնա-նալը բացօթեայ, աստղագարդ երկնքի տակ, անկարագրելի երանութեան աղբիւր կը դառնար:



Ով որ բախտ չ'է ունեցած բաց երկնքի տակ քնանալու, չի գիտեր թէ ինչի՞ մասին կը խօսիմ, մասնաւորաբար այս վայրկեանին, երբ տաս-նամեակներու խորքէն մտապատկերիս վրայ կը վերակենդանանան անոնց հետ կապուած յուշերը:

Ամրան տաքերը սկսելուն պէս տանիք կը փոխադրէինք անկողնա-յին մեր պարագաները՝ կարպետներ ու խսիրներ, ներքնակ ու վերմակ եւ անպայման մժեղարգելներ, որոնք թափանցիկ վրաններու նման կողք-կողքի կը շարուէին, վանելու համար տաք եղանակին, խաղողին ու թուզին հետ յայտնուող արիւնածուծ մժեղները:

Հեռատեսիլ չկար տակաւին, որ մարդիկ «սահրա» ընէին մինչեւ ուշ գիշեր, ատոր համար ալ կանուխ վեր կը բարձրանայինք, մենք փոք-րերս, որպէսզի քիչ մը կատողինք այդ բողբոջ փափուկ անկողիներուն վրայ տապալկելով, մինչեւ որ յոգնէինք ու քունը առնէր մեզ իր գիրկը ու օրօրէր մինչեւ առաւօտ:

Այգաբացին կ'արթննայինք, շատ կանուխ, քանի որ արդէն կշտա-ցած կ'ըլլայինք քունէն, առաւել, որ դիմացի փուռին մետաղեայ ոլորուն վարագոյրը ճոխնչով մը կը բացուէր ու հացթուփի աղմուկը ծայր կ'առ-նէր: Դեռ մութուլուսին, պիտի սկսէին շարել խմորն ու վառել փուռը, որպէսզի հաց թխէին եւ թարմ ու տաք հացի համար փուռ վագողնե-րուն պահանջները գոհացնէին:

Թարմ ու տաք հացին բուրմունքը կը դողտացնէր մեր ռունգերը, սակայն ցախերով ու մանրուք ածուխով բանող փուռը ծխնելոյզէն կ'ար-ծակէր այնպիսի մութ, որուն փոշին մեր մժեղարգելներէն ներս թափան-ցելով, յաճախ մեր երեսներն ալ կը սեցնէր:


Քնանալու նախերգանքը, որ կրնար մէկ ժամէն անելի տեւել, ամե-նահետաքրքրական պահն էր, ուր դրացիներ տանիքէ - տանիք իրա-րու հետ կը խօսէին գանազան ու գարմանազան սիւթերու շուրջ: Եր-բեմն շուրջի տանիքներուն վրայ այք պտտցնելով, աղջիկ-մաղջիկ ալ կը հաւնէին, կամ հակառակը ասոր անոր հասցէին տեսակաւոր բամ-բասանքներ կը փոխանակէին ու չէին մոռնար անկողիներուն կողքը շարուած ափսէներու մէջ արեւի ջերմութեամբ եփող լոլիկի ռուպին, կամ ծիրանի անուշիկ մասին ալ ակնարկներ ընել ու մասնագիտական տեղեկութիւններ փոխանակել:

Կը յիշեմ տակաւին, մեր տան կողքին անելի բարձրադիր տանիքէ մը տարեց մարդ մը՝ արիշէն կախուած լամբին օգնութեամբ, ասոր անոր տանիքը կը գնէր ու այքը միշտ կիներուն վրայ էր: Կիները անոր անու-նը «բու» դրած էին, եւ օր մըն ալ զգուած անոր ամենօրեայ լայիշ նա-յուածքներէն, քար մը նետելով կոտրեցին անոր լամբը: Այդ եղաւ ու մարդը մէջ մըն ալ չհամարձակեցաւ տանիք ելլել եւ կիները դիտել:

Հիմա, այսքան երկար տարիներու հեռաւորութենէն անկարագրե-լի կարօտով կը յիշեմ այդ բոլորը ու կ'ըսեմ ա՛խ, այդ տանիքները լեզ ու ունենային ու պատմէին:

ԱՌԱՍՊԵՆՆԵՐՈՒ ՃԱՄԲԱՆԵՐՈՎ

-7-



Յուշիկ Ղազարեան

Միտերի Դուռը

Վանայ լիճին մօտակայքը, բարձրունքի մը վրայ կը գտնուի քարե դուռ մը: Ան մինչեւ օրս կանգուն կը մնայ՝ իր վրայի անշուշտ անհայտ փորագրութիւններով, որոնք գաղտնիքը բացայայտուած է այսօրուան հնագետին, սակայն անոր գերբնական տեսքը տակաւին կը յուշէ հին դարերէն եկած խորհուրդ մը: Փորագրութիւնը հին ուրարտական սեպագիր արձանագրութիւն մըն է, աստուածներու անուանացանկ մը՝ իւրաքանչիւր անունին առջեւ յիշելով, թէ ո՞ր տեսակի անասուններէն քանի՞ գոմէ պէտք է մատուցել: Դուռը պարզապէս ժայռին վրայ փորագրուած քանդակ մըն է, որ իսկական դուռն է, չի բացուիր եւ ոչ մէկ տեղ կը տանի: Այսպիսի դռներ գտնուած են աշխարհի չորս կողմը՝ գանազան հնագիտական վայրերու, հնագոյնները՝ Եգիպտոսի մէջ: Անոնք օգտագործուած են ծիսական նպատակներու համար, որպէս Անդենական տանող դռներ: Վանայ լիճին մօտակայքը գտնուող ուրարտական «դուռ»ը ժամանակի ընթացքին առած է տարբեր իմաստ եւ կոչուած «Միտերի Դուռ», վերագրուած է «Սասնայ Ծռեր» անուղափակ վերջին ճիւղի հերոսին՝ Փոքր Միտերին:

Փոքր Միտերը «Սասնայ Ծռեր»ուն ամենէն ողբերգական հերոսն է: Ան ձեռքը բռնուցք ըրած կը ծնի եւ ոչ ոք, բացի իր հուժկու հորմէն՝ Սասունցի Դաւիթէն, կրնայ բանալ նորածինին ափը, որուն մէջ Դաւիթ կը գտնէ արիւն, ինչ որ կը գուշակէ անոր ողբերգական աւարտը: Ամբողջ մանկութեան ու պատանութեան շրջանին Միտը կը մեծնայ իր բացակայութեան, այն աստիճան, որ շրջապատի երեխաները գինք կը ծաղրեն ամբաստանելով, թէ Միտը ապօրինի գաւազ է եւ այդ պատճառով հայր չունի: Ի վերջոյ պատանի Միտը կ'որոշէ ճամբորդել հայրը գտնելու համար: Ճամբան հայր ու գաւազ իրարու կը հանդիպին, սակայն չեն ճանչնար զիրար եւ գօտեմարտի կը բռնուին: Դաւիթ, որ արդէն ծերացած էր եւ իր երդմանադրութենէն տկարացած, իր հարազատ գաւազին ձեռքով պարտութեան կը մատնուի: Թելի բազպանտէն ճանչնալով Միտը, Դաւիթ կ'անիծէ իր գաւազը:

« Միտ'ը, որ դու հետ ինծի կռիւ արիր, Ինծի ամակնչեցիր, Կանչեր եմ քաղցրիկ Աստուած, Անմահ ըլլիս, անժառանգ

Միտ'ը, քակի որ ինծի հետ կռիւ ըրիր, Չիս ամչցուցիր, Կանչեմ ես քաղցր Աստուած Անմահ ըլլաս եւ անժառանգ»:

Միտերին ամբողջ կեանքը պայքար մը կ'ըլլայ անարդարութեան դէմ, սակայն ապարդիւն պայքար մը, որովհետեւ իր անեծքը կրողը չի կրնար փախչիլ ճակատագիրէն: Ան կ'ամուսնանայ, սակայն անգաւազ կը մնայ. բազմաթիւ հերոսութիւններ կը կատարէ, սակայն չի գնահատուիր իր շքրջապատէն: Ի վերջոյ անեծքը կ'իրականանայ, Միտերին ոտքերը այնքան կը ծանրանան, որ չի կրնար հողի վրայ քալել ու իրենէն ձին առած կը քաշուի քարայրի մը մէջ, ուր կը մնայ մինչեւ օրս:

Անուղափակ ողբերգական այս աւարտը, բնական է գանազան մակարդակներու վրայ: Ինչպէս նախապէս յիշեցինք, «Սասնայ Ծռեր»ը հիմնուած է իսկական պատմական դէպքի մը՝ արաբական իշխանութեան դէմ թ. դարու հայոց ապստամբութեան վրայ, որ աւարտեցաւ հայկական կողմին պարտութեամբ: Սակայն այս բաւարար բացատրութիւն չէ, նկատի առնելով, որ հայկական առասպելներուն մէջ կայ Միտերէն անունի հին հերոս մը, որ արժանացած է Նոյն ճակատագիրին, երբ հայութիւնը կ'ապրէր քաղաքական բարորութեան գագաթնակէտը՝ Արտաշեսեան հարստութեան շրջանին: Խօսքը անշուշտ կը վերաբերի Արտաշէս Աշխարհակալի որդիին՝ Արտաւազդ Ա. թագաւորին:

Արտաշէս արքան երբ կը վախճանի, ամբողջ երկիրին մէջ մեծ սուգ կը պատէ: Ըստ երեւոյթի, այդ ժամանակաշրջանի հայութեան մէջ տարածուած էր մեռնողին հետ մարդկային գոհաբերութիւններ կատարելը, ինչպէս բազմաթիւ հին ազգերու մօտ: Մանաւանդ բարձրաստիճան ու ազնուագարմ մեռելին հետ կը թաղէին անոր կիները, ծառաները, շարժական գոյքերը, Նոյնիսկ՝ երիվարը: Արտաւազդ, երբ կը դիտէ իր հետ թաղուածներուն քանակը ափսոսանքով կ'արտայայտուի, թէ իր մահէն ետք արդեօք ինք աներակներու վրայ՝ պիտի թագաւորէ: Այս յանդուգ արտայայտութեան պատճառով, կ'ըսուի, թէ Արտաշէս գերեզմանին մէջէն կ'անիծէ Արտաւազդը:

« Եթէ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս, Չքեզ կալցիս քաջք, Տարցին յԱզատն ի վեր ի Մասիս, Անդ կայցես, եւ զլոյս մի տեսցես:

Երբ դուն ձի հեծնես, որսի երթաս, Ազատն ի վեր, ի Մասիս, Քաջքերը քեզ կալանեն՝ Տանին Ազատն ի վեր, ի Մասիս, Այնտեղ մնաս եւ լոյս չտեսնես»:

Արտաւազդ երկար ատեն կը խուսափի Մասիս լեռան մօտակայքը երթալէ, սակայն ճակատագիրէն ու անեծքէն, յատկապէս իր անեծքէն փախուստ չկայ: Եւ ահա, օր մըն ալ Արտաւազդ, երբ որսի կ'երթայ Արարատ

լեռ, հոն լեռան չարքերը գինք կը կալանեն: Ըստ անուղութեան, մինչեւ օրս Արտաւազդ շղթայուած կը պահուի Մեծ Մասիսի անդունդներուն մէջ, իր երկու պահապան շուներով, որոնք կը փորձեն շղթաները լիզելով մաշեցնել ու ազատ արձակել հայոց թագաւորը:

Որքան նմանութիւններ կան Փոքր Միտերին եւ Արտաւազդ թագաւորին միջեւ: Երկուքն ալ հայրական անեծքով անմահացած են, երկուքն ալ երկրի ընդերքը բանտարկուած են եւ երկուքին ալ վերադարձը կը սպասենք մինչեւ այսօր: Առասպելական բոլոր խորհրդանշաններուն պէս, երկուքն ալ երկբնոյթ են, այսինքն կարգ մը պատումներու համաձայն, եթէ Միտը կամ Արտաւազդը դուրս գայ, աշխարհը պիտի քանդէ, իսկ այլ պատումներու մէջ այս հերոսները դուրս պիտի գան աշխարհի վրայ հաստատելու օրէնք, կարգ ու կանոն: Այլ նմանութիւն մըն ալ Միտերին եւ Արտաւազդին միջեւ, ապօրինի գաւազ ըլլալու կասկածն է: Արտաւազդի ծնողներուն՝ Արտաշէսին ու Սաթենիկին պատմութիւնը յայտնի է բոլորին: Ըստ կարգ մը առասպելներու, Սաթենիկ, վրէժ լուծելու համար իր ամուսինին գինք բռնի փախցնելու արարքէն, կը յարաբերի վիշապներու հետ եւ այդ յարաբերութենէն կը ծնի Արտաւազդը: Այդպէս ալ կը բացատրուի Արտաւազդին չար բնոյթը եւ գայն կալանաւորուած պահելու անհրաժեշտութիւնը: Աւելին՝ իր ծագումնաբանութեան մասին տարածայնութիւնները կասեցնելու համար, Արտաւազդ կը յարձակի վիշապներու ցեղին վրայ եւ մեծ պարտութեան կը մատնէ գանոնք:

Այսպէս, Փոքր Միտերին եւ Արտաւազդին պատմութիւնները կըրնանք ամփոփել հետեւեալ ձեւով: Դերոսը մանուկ հասակէն մեծցած է իր վերաբերող բարոյութեամբ, անոր շրջապատը համոզուած է, որ ինք ապօրինի գաւազ է: Այս տարածայնութիւնները կասեցնելու համար պատանին կը դիմէ, իր կարծիքով, հերոսական արարքի մը, որ պիտի փարատէ իր անձին շուրջ ամեն կասկած, սակայն չկարենալով իրականացնել իր առաքելութիւնը, ոչ միայն պիտի պարտուի, այլ նաեւ պիտի արժանանայ իր անեծքին, որ անեծքներուն մէջէն ամենէն սարսափելին է: Երկար ատեն հերոսը կը խուսափի անկէ, կը կատարէ բազմաթիւ հերոսութիւններ, բայց ի վերջոյ չի կրնար փախուստ տալ եւ անեծքը կ'իրականանայ: Զօր վերաբերող բարոյութեան մասին հետաքրքրական պատում մըն է այս, որ նաեւ իր մէջ կը կրէ ազդարարութիւններ այն պատանիներուն, որոնք անհաշտ յարաբերութիւն կ'ունենան իրենց հայրերուն հետ, նաեւ հայրերուն, որոնք իրենց տղաները կ'անտեսեն մանուկ հասակին, իսկ պատանի տարիքին անոնց հետ կը մտնեն բախումնային վիճակի: Երկու կողմերուն ալ համար այս պատմութիւնը ունի միայն տխուր եւ անլուծելի աւարտ: Փոքր Միտերին ամբողջ կեանքը պայքար մըն է անարդարութեան դէմ, սակայն ինչ օգուտ, երբ ան ապրած է անարդարութիւններուն ամենամեծը՝ ծնողական անարդարութիւնը: Ի վերջոյ մարդ ընկերային յարաբերութիւնները եւ արժեքները կ'ընկալէ իր դաստիարակութեան համեմատ: Սիրոյ, արդարութեան ու այլ առաքելութիւններու պատկերը նախ պէտք է տեսնել ընտանեկան յարկին տակ, իսկ երբ ընտանիքը քայքայուած է, հայրը՝ բացակայ, մայրը՝ խեղճացած, ուրեմն այլեւայլ բարոյութեան բոյն պիտի դնեն պատանին հոգիին մէջ ու ի վերջոյ պատճառ դառնան անոր չեզոքացումին, որպէս գործուն անդամ ընկերութենէն ներս:



Միւս կողմէն Փոքր Միտերն ու Արտաւազդը, կը ներկայացնեն մեր հաւաքական եսին կարեւոր կողմերէն մին: Կարելի է ըսել, որ հայութեան հերոսական ոգին ալ, պատմական ընթացքին բերումով, անոնց պէս կալանաւորուած է եւ պիտի գայ անոր վերադարձի օրը: Անոնք կը ներկայացնեն խորհրդանշան մը, որ բազմիցս գործածուած է մեր արուեստին ու գրականութեան մէջ, յատկապէս Չարթօնքէն ետք: Այո, գրեթէ բոլոր ազգերը ունին իրենց բանտարկուած հերոսին պատմութիւնը, ան որ ուշ կամ կանուխ պիտի վերադառնայ, որպէսզի կամ քանդէ աշխարհը, կամ՝ արդարութիւն հաստատէ: Բայց ինչ բոյթ այս բոլորը: Երբ կը նային Միտերի Դրան, չեմ ուզեր մտածել, թէ անոր նման քանի՞ դուռ կայ աշխարհի չորս կողմը, թէ անոնք ծիսական ինչ-ինչ գործածութիւններ ունեցած են, թէ անոր վրայի գրութիւնը սեպագիր ուրարտական լեզուով է: Երբ նային Մեծ Մասիսին, յատկապէս անոր կողմի Մասեաց Վիհին, չեմ ուզեր մտածել, թէ հրաբխային ինչպիսի՞ ժայթքումներ կրնան պատճառել այդպիսի փառահեղ վիհ մը: Նոյնիսկ չեմ մտածեր, թէ որքան անհաւատարմ կամ խորհրդանշանական են այս բոլորը: Այլ կ'ուզեմ հաւատալ, որ Մասիս լեռան մէջ ու Վանայ լիճին քով, մեր ազգային ամենէն հարազատ խորհրդանշաններուն ընդերքը, պահուած են հայ հերոս մը ու թագաւոր մը: Անոնք հոն են, որպէս պահապաններ մեր գաւթուած իրաւունքներուն, անոնք պիտի պահեն մեր բռնագրաւեալ հայրենիքին սրբութիւնը, մինչեւ...

Պատեհութիւնը ունեցած էմ գտնուելու Արարատ լեռան հետ դէմ յանդիման ու շշնջալու. «Սպասէ՛, տէ՛ր արքայ... պիտի գանք ու մենք քակենք շղթաներդ»...

ՀԱՐՑԱԶՈՐՈՅ

ՏՈՔԹ. ՆԵՐՍԷՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ. «ԱՆԿԱԽ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ՄԱՂԱԲԱՆՋԷՆ, ՍՈՒՐԻԱՆԱՅ ՆԱՄԱՅՆՔԸ, ՅԱՏԿԱՊԷՍ ՆԱԼԵՊԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ, ՆԱՐՈՒՍ Է ԻՐ ՄԱՐԴՈՒԹՈՎ»

Քուէյթի Ազգ. վարժարանի տնօրէն տոքթ. Ներսէս Սարգիսեանի Զալէպ այցելութեան առիթով, «Գանձասար» իր ընթերցողները Քուէյթի հայ համայնքին ծանօթացնելու եւ Տոքթ. Սարգիսեանի տպաւորութիւնները իմանալու համար հետեւեալ հարցազրոյցը ունեցաւ անոր հետ.

«Գանձասար».- Խնդրեմ Քուէյթի հայ համայնքին մասին համառօտ ակնարկ մը ներկայացնէ՞ք: Ի՞նչ են այդ համայնքին յատկութիւնները հայութեան ընդհանուր պատկերին մէջ:

Ներսէս Սարգիսեան. - Քուէյթի համայնքը Ծոցի շրջանի ամենահին համայնքն է: Կարելի է այդ համայնքը նկատել Սփիւռքին Սփիւռքը, այն իմաստով որ ցեղասպանութենէ վերջ կազմուած համայնք չէ, այլ՝ Միջին Արեւելքի համայնքներէն աշխատանքի որոնման հետեւանքով համախմբուած հայութեան Քուէյթ մէկտեղման հետեւանք է, որ իր սկզբնական օրերուն՝ 1940-ական, 1950-ական թուականներուն, պարսկահայերէ, լիբանանահայերէ եւ սուրիահայերէ կազմուած էր, սակայն այսօր համայնքը առաւելաբար սուրիահայերէ կազմուած է:

Աշխատանքի բերումով այնտեղ համախմբուած հայերը ունին յատուկ պարագայ, այն իմաստով, որ երկրի քաղաքացիներ չեն, երկրին օրէնքը չի թոյլատրեր, որ քաղաքացիութիւն ունենան, նոյնիսկ եթէ հոն ծնած ըլլան: Ծրջանի հայութեան հոգ տեսնելու եւ կրթական կարիքները կը հոգան թեմական կառոյցները եւ միութիւնները:

«Գ.».- Ուսումնական կեանքը ինչպէ՞ս կ'ընթանայ: Ինչպիսի՞ առաւելութիւններ կամ դժուարութիւններ ունի Ազգային վարժարանը, որպէս հայկական կառոյց:

Ն.Ս. - Քուէյթի Ազգային վարժարանը խորքին մէջ մէկ յարկի տակ գործող երկու դպրոցներէ բաղկացած է. մանկապարտէզ եւ միջնակարգ՝ private school, իսկ երկրորդականը, որ քուէյթեան պաքաւորիայի վկայական կը տրամադրէ, այլ վարժարան է՝ Թատաման երկրորդական անունով: Այս երկու կառոյցները կը գործեն մէկ յարկի տակ եւ որովհետեւ պաքաւորիան քուէյթի պետական ծրագիրն է, նախակրթարանը եւ միջնակարգը պարտաւոր են նոյն շունչով ընթանալ, որպէսզի աշակերտութիւնը նախապատրաստեն այդ ծրագիրին: Մենք վերջին շրջանին աշխատանք տարինք, որ դպրոցը դարձնենք մէկ ամբողջութիւն, այս երկուութենէն դուրս գանք, նաեւ դարձնենք մէկ դպրոց, որ կ'ունենայ մէկ ծրագիր, որուն մէջ գիտական նիւթերը կը դասաւանդուին անգլերէնով, պահելով հանդերձ հայերէնը: Այս պարագային մէկ առաւելութիւն պիտի ունենայինք, որ հայերէնը

մինչեւ պաքաւորիա պարտադիր առարկայ պիտի ըլլար եւ անոր գնահատականը պիտի ազդէր աշակերտին միջինին վրայ: Այս ուղղութեամբ գործակցեցանք Զայաստանի Կրթութեան Նախարարութեան հետ, օրուան նախարար Լեւոն Մկրտչեանին, ապա այսօրուան նախարար Արայիկ Յարութեանեանին հետ: Այս գործակցութիւնը մեծ մարտահրաւեր էր եւ քանի մը առաւելութիւն ուներ դպրոցին համար: Առաջինը այն էր, որ հայերէնի դասաւանդութիւնը կը դառնար պարտադիր, իսկ նիւթին գնահատականը կ'ազդէր աշակերտին ընդհանուր միջինին վրայ: Երկրորդ՝ նոր, ենթադրեալ ծրագիրին մէջ գիտական նիւթերը անգլերէնով պիտի դասաւանդուէին: Սա աւելի արդիական ծրագիր էր, մեր նպատակը Զայաստանի ծրագիրը իւրացնելն ու պահպանելով այդ ամբողջ ծրագիրին տրամաբանութիւնը, գիտական նիւթերը անգլերէնով դասաւանդելն էր՝ հայաստանեան կրթական փոփոխութեամբ, նոյն ձեւով: Այս ուղղութեամբ մեզի նպաստեց Անանիա Շիրակացի կրթահամալիրը: Օրին Զայաստանի կրթական իշխանութիւնները մեզի ուղղեցին Անանիա Շիրակացի: Գործակցութիւնը արդէն ընթացքի մէջ է, շատ հսկայ աշխատանք է, դպրոցի մը ծրագիրը վերատեսութեան ենթարկելը դիւրին բան չէ:

Այս ծրագիրը կիրարկելու պարագային, օտար վարժարաններ յաճախող աշակերտներուն թիւը կըրոնայ նուազիլ, որովհետեւ ընդհանրապէս օտար վարժարաններ յաճախող աշակերտներուն ծնողներուն մտահոգութիւնը այն է, որ հետագային, համալսարաններուն մէջ, իրենց գաւակները լեզուական դժուարութիւն չեն գտներ երբ արեւմտեան կամ լիբանանեան համալսարաններ յաճախեն: Այս պարագային մենք այդ բացը գոցած կ'ըլլանք: Բաւական աշխատանք տարուած է, պէտք է շարունակուի: Սա մեծ մարտահրաւեր է: Մենք զուգահեռաբար դպրոցի ենթակառոյցը նորոգելու աշխատանքին ալ ձեռնարկեցինք: Նորոգութեան աշխատանքին ներդրում բերին համայնքի գաւակները եւ տեղւոյն բարեփոխական ու քուէյթեան կողմեր: Այսօրուան դրուածքով, դպրոցի ենթակառոյցին 90 առ հարիւրը վերանորոգուած է իր բոլոր բաժիններով՝ տարրալուծարաններով, սրահներով, conference room-ով, շարժանկարի սենեակով, դասարաններով: Գրադարանի նորոգութիւնը ցարդ չէ ամբողջացած: Մտադրած ենք գրադարանը mediatech-ի վերածել, արդիական միջավայրի մը, որ ոչ միայն գրադարան ըլլայ, այլ լսատեսողական կեդրոն, ուր աշակերտը եւ հաճելի, եւ օգտակար ժամանակ կ'անցընէ: Կը յուսանք, որ այդ ալ կ'իրագործուի այս մէկ-երկու տարուան ընթացքին:

Մենք կը կարծենք, որ այս վարժարանին գոյութիւնը եական է: Եթէ չըլլայ այս վարժարանը, Քուէյթի հայ համայնքը լիարժէք համայնք չ'ըլլար: Բաղդատենք զայն Իմարաթի համայնքին հետ: Իմարաթի մէջ հաւանաբար նոյնքան հայութիւն կայ, որքան Քուէյթի մէջ, բայց Քուէյթը աւելի կազմակերպուած համայնք է, եւ անոր պատճառներէն մէկը ամենօրեայ վարժարանի գոյութիւնն է: Ուստի այդ վարժարանի պահպանելը ռազմավարական նշանակութիւն ունի շրջանին մէջ, որպէսզի այս երկիրներուն մէջ հայութիւնը մնայ կազմակերպ, մնայ քաղաքականացած եւ ազդեցութիւնը ունենայ իր միջավայրին վրայ: Այստեղ եւս թիւի նուազում կայ վերջին քանի մը տարիներուն, որովհետեւ Քուէյթէն ալ գաղթ կայ: Գաղթը, բարեբախտաբար, մեծ մասամբ դեպի Զայաստան է, բայց կայ նաեւ դեպի Զանաւա, դեպի արեւմտեան այլ երկիրներ: Գաղթի երեւոյթը կը շարունակուի, որովհետեւ Քուէյթի տընտեսական վիճակը անցեալի փայլուն պատկերը չի պարզեր:

«Գ.».- Որպէս Սուրիոյ տաղնապարտ եւ վերջին երեք տարիներուն Սուրիայէն դուրս ապրած հայկական, ինչպէ՞ս կը դիտեք ձեր, մեր տաղնապարտ մօտեն եւ հեռուն: Իսկ հիմա, երբ արդէն մէկ ամսուան այցելութեամբ Զալէպ կը գտնուիք, ի՞նչ մարտահրաւերներու դէմ յանդիման կը տեսնէք սուրիահայ համայնքը իր գոյատեւման երթին մէջ:


Ն.Ս. - Ես Զալէպէն մեկնեցայ Յուլիս 2016-ին. արդէն քանի մը ամիս վերջ Զալէպը ազատագրուեցաւ: Մենք այդ լուրերը, հետագային նաեւ գաղութի վերականգնումի աշխատանքները շատ դրական նկատեցինք եւ այդ ամբողջ մարտահրաւերները, որոնց դէմ յանդիման էր գաղութը արդարացի դուրս եկան:

Այսօր, Զալէպի մէջ, ապահովական եւ կենցաղային իմաստով, դրական շատ մեծ տեղաշարժ կայ: Ընդհ. է, կը պատահին հատուկ երեւոյթներ, այսուհանդերձ շատ զգալի է դրական ընթացքը: Այս գարգացումներուն զուգահեռ, սակայն, ժողովուրդի հոգեբանութեան ենթադրեալ դրական տեղաշարժ չընկատեցին: Այս իրավիճակը երկու երեւոյթներու կը վերագրուի առաւելաբար:

Առաջինը այն է, որ ժողովուրդը կ'ենթադրէր, թէ երբ Զալէպը ազատագրուի, շատ արագ կերպով կազմուի ման վիճակ մը պիտի ստեղծուի, յատկապէս տնտեսական բնագաւառին մէջ, ինչ որ ցաւօք տե-

ղի չունեցաւ:

Երկրորդը այն է, որ տակաւին երեւելի չէ համայնքը պատերազմական իրավիճակէն դեպի վերականգնումի իրավիճակ ուղղելու ամբողջական, շօշափելի ծրագիր մը: Զամայնքը, իմ պատկերացումով, ունենալու է ներկայ պայմաններուն համահունչ, նոր մտայնացումներով յագեցած ծրագիր, որ պէտք է ընդգրկէ համայնքի կեանքին այլազան երեսները՝ տնտեսական, կրթական, քաղաքական, ծառայողական



եւ այլն: Վերականգնումը միայն շէնքեր կառուցել չի նշանակեր: Սուրիահայ համայնքը նախորդ տարիներուն փաստեց, որ իր անկոտորում կամքով վերապրեցաւ ու յաղթանակեց: Այդուհանդերձ զգոյշ պէտք է ըլլալ եւ թոյլ չտալ, որ ֆիզիքական պատերազմը յաղթահարած գաղութը հոգեբանական պարտութիւն կրէ խաղաղութեան պայմաններուն մէջ:

Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի վիճակ, որուն շնորհիւ համայնքի գաւակները առկայ պայմաններուն մէջ իրենց լաւագոյնը տան՝ այլազան բնագաւառներու մէջ: Իրագործելի հսկայական աշխատանք կայ եւ գոյութիւն ունի սքանչելի երիտասարդութիւն: Այդ, անկախ պատերազմական տարիներու մղձաւանջէն, սուրիահայ համայնքը, յատկապէս հալէպահայութիւնը, հարուստ է իր մարդուժով: Պէտք է գուրգուրալ այդ մարդուժին վրայ: Ես դժուարութեամբ կը պատկերացնեմ, օրինակ, որ կրթական մշակ մը կամ ազգային պաշտօնեայ մը սահմանափակ եկամուտով գոյատեւէ այս պայմաններուն մէջ եւ իր լաւագոյնը կարենայ տալ: Այս մարդուժը պէտք է պահել լօզ ունեցնելու ձեռնարկներու ընթացքին հնչող պատգամներէ անդին, գործնական քայլերով: Պէտք է գուրգուրալ անոր վրայ, տնտեսական իր վիճակը բարելաւել եւ վստահեցնել զինք, որ տարիներու գոյապայքար մղած ըլլալով, պիտի կարենայ այլեւս այս երկրին մէջ արժանապատիւ կեանք մը վայելել: Ուրեմն անհրաժեշտ է կեդրոնանալ այս մարդուժը պահելու աշխատանքին վրայ:

**Հարցազրոյցը վարեց
Չարմիկ Պողիկեան
Արտագրեց
Անի Թովալեան-Սարուխան**

ՔՐՄԱՊԵՏ ՄԸ՝ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԵՅԵԱՆԻՆ ՄԷՉ (ՅԻՇԵԼՈՎ ԱՆՄԱՐԱՆՈՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ ՇԱՐԱՆ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆԸ)




Հենո Շառոյեան

ՇԱՐԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ HENRI BERGSON

Շահան Պերպերեանի հարիւրաւոր աշակերտները միահամուռ կը վկայեն, որ ան իսկական իմաստասէր մըն էր, բազմակողմանի հըմտութեամբ օժտեալ արտակարգ մտաւորական մը: Փիլիսոփայութիւնն ու յարակից գիտութիւնները գաղտնիք չունէին իրեն համար: Կատարեալ դիրութեամբ ու ամենայն ձեռնհասութեամբ կ'աւանդէր ընկերաբանութիւնն ու հոգեբանութիւն, մանկավարժութիւնն ու տրամաբանութիւն, իմաստասիրութեան պատմութիւնն ու բնագանցութիւն, արուեստի պատմութիւնն ու գեղեցկագիտութիւն, նաեւ՝ բարոյախօսութիւն: Ան կատարեալ նուիրեալն էր **Բարիին, Գեղեցիկին ու Ճշմարիտին**. այսինքն՝ կեանքի բարոյական այն հասկացութիւններուն, որոնց խնկարկուն եղած էր նաեւ իր ողբացեալ հայրը՝ Ռեթեոս Պերպերեան:

Անկասկած որ ան մեծապէս ազդուած էր Սորպոնի համալսարանի իր հռչակաւոր ուսուցիչէն՝ Զանրի Պերկսոնէն (1859-1941), որուն համակրանքը կը վայելէր: Պերկսոն



Զանրի Պերկսոն

Ֆրանսայի մեծագոյն փիլիսոփաներէն մին էր, ունէր միջազգային համբաւ ու 1927-ին շահած էր Գրականութեան Նոպելեան Մրցանակը: Պերպերեան, երբ գրեր ու դատակազմին ներկայացուցեր էր «Ախտային Զոգեբանութիւն»-ի մասին իր համալսարանական ասարտածառը, Պերկսոն գայն կարդացեր էր իր հիացումով ու հրապարակաւ գնահատեր էր զինք բարձրօրէն՝ հետեւեալ հաստատումով. *«Monsieur Chahan Berberian est un vrai philosophe»* («Այր. Շահան Պերպերեան ճշմարիտ իմաստասէր մըն է»): Պերկսոն անձամբ յանձնէր էր Շահան Պերպերեանին՝ համալսարանի շրջանաւարտութեան վկայականը:

Պերպերեան հիացող մըն էր Պերկսոնի: Անոր մասին դասախօսութիւն մը տուած է Գահիրէ, Զայ Գեղարուեստասիրաց Միութեան մէջ, 1933-ին, երբ Պերկսոն տակա-

ւին ողջ էր:

Իմաստասիրական միտքը մեր մօտ, արեւմտահայ-սփիւռքահայ իրականութեան մէջ, գարգացում չէ ապրած դժբախտաբար: Մնացած է խոպան: Մեր շուրջըլորը քանի՞ իմաստասէր ունեցեր ենք կամ ունինք: Առջի դարուն՝ թերեւ բանաստեղծ Եղիա Տեմիրճիպաշեանն ու Յարութիւն Մրմըրեանը փորձած են մերձենալ փիլիսոփայութեան, մեր օրերուն՝ Պոլսէն Ռ. Զատտեճեանը՝ գրականութեան ճամբով, Պեյրութէն Սեդա Տատոյեանը՝ վերլուծական որոշ էջերով: Կա՞ն ուրիշ անուններ: Շահան Պերպերեան, ուրեմն, իմաստասէրի իր հանգամանքով, կը պահէ բացառիկ դիրք մը մտաւորականներու մեր ածուին մէջ եւ իր գիրքերով ալ կը շարունակէ իր «խօսք»ը հնչեցնել:

Եւ գարմանալի է որ իր ողջութեան՝ Պերպերեան բնաւ փոյթ չէ ըրած առանձին ժողովածուներով հրատարակելու իր իմացապաշտ վերլուծումները:

Ինք որ ժամանակակից հայ գրականութեան տիրապետող դէմքերէն մէկը կրնար դառնալ, բաւարարուեցաւ լոկ քանի մը յօդուածաշարքերով ու գեղեցկագիտական տեսութիւններով: Ծիշդ է՝ տեւաբար դասախօսեց ու բանախօսեց, Պոլսոյ, Երուսաղէմի ու Պեյրութի մէջ անհամար լսարաններ սարքեց՝ արուեստի հոլորտարածելով ունկնդիր խաւերուն մէջ, բայց ընդհանրապէս խուսափեցաւ գրիչ շարժելէ: Զանսաց նաեւ հանգամանաւոր անձերու կողմէ այս առնչութեամբ իրեն եղած յաճախակի թելադրանքներուն: Ծուլութիւն: Նկատի չառաւ այն ճշմարիտ ատութիւնը թէ **«խօսքը կը թղթչի՛, իսկ գիրը կը մնայ»**: Եւ այս երեւոյթն ալ գրել տուած էր Անդրանիկ Ծառուկեանին, թէ **«Յեղիակութիւն մըն էր Շահան՝ առանց հեղինակ մը եղած ըլլալու»**...:

Սակայն բարեբախտաբար, 70-ական թուականներէն սկսեալ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի տպարանէն հեղթաբար լոյս ընծայուեցան Պերպերեանէն անտիպ էջեր կամ դասախօսական նոթեր ու գրառումներ, առանձին հատորներով, որոնք այսպիսով՝ փրկեցին իր մտքի եզակի վաստակը:

Շահան Պերպերեան հեռացաւ այս աշխարհէն առանց հետեւորդներ ունենալու:

Ա՛լ չկայ այն պարարտ հողն ու հին կրթական մթնոլորտը, որ կրնայ նոր Շահաններ հանել մեր դիմաց: Մայր Բնութիւնը տասնեակ տասնամեակներ կրնայ սպասեցնել մեզ՝ նոր Շահան մը դրկելու համար երկիր...:

Մեր շուրջըլորը՝ հիմա դժուար է գտնել նոյնիսկ իրեն աշակերտած անձեր: Անոնցմէ մին՝ ամերիկաբնակ Թորգոմ Փոպաճեան (Անթիլիասի Դպրեվանքէն, ծն.՝ 1926), հետեւեալ տողերով կը նկարագրէ իր

ուսուցիչը.

«Դասարան կը մտնէր ան առանց որեւէ նոթի կամ գիրքի: Բեմ կը բարձրանար եւ ոտքի կեցած կը դասախօսէր: Որպէս աշակերտ՝ մեր պարտականութիւնն էր ուշի-ուշով մտիկ ընել իր դասախօսութիւնները եւ նորագրել զանոնք: Յետոյ ալ՝ մաքրօրէն գրի առնել եւ իրեն յանձնել...: Պր. Պերպերեան կարողալէ ետք զանոնք՝ կրնար պատկերացում մը ունենալ, թէ որքանո՞վ ըմբռնած էինք իր խօսքերը, ի՞նչ մակարդակի վրայ էր մեր մտքի հասունութիւնը...» («Մեծերու Զետ եւ Մեծեր», Անթիլիաս, 2007):

Ուրիշ երախտապարտ աշակերտ մը՝ Արտաւազդ արք. Թրթռեան (1930-2013), նկատել կու տայ որ երբ Պերպերեան գրական վերլուծումներ կատարէր, անպայման կ'ուզէր հասնիլ վերլուծուող գրական տուեալ կտորին (արձակ թէ չարձակ)՝ **«ամենէն թաքուն տարրին**



Մանուկ Պերպերեան

եւ ամենէն նուրբ իմաստին ու ոգիին»:

Ան կը վկայէ: **«Իմաստասիրական բոլոր գիտութիւններն ու արուեստից պատմութիւնը, հնագոյն ժամանակներէն մինչեւ արդի ժամանակներ, կը դասաւանդէր տիրաբար, հեղինակութեամբ, առանց ո՛չ մէկ գիրք կամ տետրակ կամ արձանագրութիւն ունենալու ձեռքին տակ, եւ սակայն անուններու, վայրերու եւ թուականներու կատարեալ եւ ապշեցուցիչ ճշգրտութեամբ: ... Աշխարհը՝ իր դասաւանդած այնքան այլազան ու դժուար նուաճելի նիւթերուն, կարծեք շքեղօրէն լուսաւոր բաց գիրք էր իրեն համար: Եւ կարծեք այդ շքեղօրէն բաց գիրքէն ինք պարզապէս կ'ընթեռնուր՝ ապրումով, հիացումով, յափշտակութեամբ...» («Արժեքաբանութիւն Կամ Արժեքներու Իմաստասիրութիւն», Անթիլիաս, 1976):**

Շահան Պերպերեան: Անկրկնելի սերունդի մը փայլուն ներկայացուցիչը: Արուեստներու ներհուն, խորաթափանց ու ծանրախոհ տեսաբանը: Սոկրատներու, Պլատոններու եւ Արիստոտելներու հայաբարբառ հետեւորդը: Դաւիթ Անյաղթի ժառանգորդը: Պատկառելի քըրմապետ մը՝ իմաստասիրութեան մեհեանին մէջ:

ՊԵՐՊԵՐԵԱՆՆԵՐՈՒ ԱՐՈՒԵՏԱՍԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Միայն հազուադէպօրէն կրնայ պատահիլ, որ միեւնոյն ընտանիքին բոլոր անդամներն ալ, մեծ ու պղզ-

տիկ, օժտուած ըլլան բացառիկ շնորհներով եւ ուրեմն՝ բոլորն ալ պատմութեան մէջ մնայուն հետք մը թողուն, անմահացնեն իրենց անունը:

Ընտանեկան ու գաղափարական շատ ամուր դաստիարակութիւն մը, բայց նաեւ՝ հետեւողական եւ նպատակասլաց կրթութիւնն ու աշխատանք հարկաւոր են, որպէսզի ճամբայ հարթուի այդպիսի երջանիկ նուաճումի մը:

Դուք այդօրինակ քանի՞ ընտանիք կրնաք ցոյց տալ մեզի:

Այդպէ՛ս էր ահա Շահան Պերպերեանի ընտանիքն ալ՝ որդուց որդի:

Մարդ իսկապէս կը գարմանալ՝ երբ աչքի առջեւ կ'ունենայ այս բարեհամբաւ ընտանիքին անդամները, որոնցմէ իւրաքանչիւրը առանձին արժեք մը եղաւ, ամէն մէկը կատարելութիւն մը՝ արուեստի այլազան մարզերու մէջ: Զայա՛րտ ընտանիք:

Եկե՛ք թուենք հանրածանօթ Պերպերեանները մէկ առ մէկ.

ա) ՌԵԹԵՆՍ ՊԵՐՊԵՐԵԱՆ, Շահանին հայրը, որ 1876-ին Պոլսոյ մէջ հիմնեց իր անունը կրող սեփական տիպար վարժարան մը ու գայն դեկավարեց շուրջ 30 տարի, մինչեւ իր մահը (Ապրիլ 1907): Իր շունչին տակ խմորեց ընտրեալ աշակերտներու ամբողջ սերունդ մը: Եղաւ ԺԹ. դարու արեւմտահայ մեծագոյն դաստիարակներէն մին: Պոլսոյ հայութիւնը մեծարանքի անմախքը թաց հանդէսով մը պանծացուց զինք 1901-ին, իր հիմնած կրթօճախին 25-ամեակին առիթով: Զեղինակն է **«Դպրոց եւ դպրութիւն»** երկասիրութեան (1907): Իր մասին ծաւալուն մենագրութիւն մը գրած ու հրատարակած է իր ասներէն մին՝ վաստակաւոր ուսուցիչ եւ բառարանագիր Պետրոս Չեքի Կարապետեան (Պոլիս, 1933):

բ) ՄԱՆՆԻԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ, Շահանին միակ քոյրը, ծնած՝ 1883-ին: Թէ՛ շնորհալի գրող է թէ՛ տաղանաւոր երգչուհի միաժամանակ: Շրջանաւարտ՝ Պոլսոյ Ամերիկեան Աղջկանց Գոլթէն եւ հետեւորդ՝ Սորպոնի գրականութեան դասընթացը:



Օնիկ Պերպերեան

Մերուն: Անցեալ դարու տասական թուականներու վերջերը ու քսանականներուն շրջեցաւ գանազան գաղութներ (մինչեւ Ամերիկա) ու տուաւ երգահանութիւն: Ուշագրաւ

Աշակերտական Անկիւն

ՔԱՅԼ ԴԷՊԻ ԱՊԱԳԱՅ

(Ազգ. Քարէն Եփփէ Ընկերային Երկրորդականի Տանդէսին Արդատամուտած Ուղերձ)

Կիրառ Աւրնեան

Այսօր ցնծութեան, երազանքի եւ հպարտութեան օր է, շրջանաւարտ պիտի ըլլանք մեր սիրելի Քարէն Եփփէ Ազգ. Ընկերային: Անշուշտ, հոս հասնելու եւ այս պահուան վայելքը ապրելու համար ժրպշան աշխատեցանք. պետք էր: Ընկերային եկանք յոյսերով, քալեցինք հաւատքով եւ աշխատեցանք սիրով:

Թէեւ պայմաններու բերումով մեր առաջին քայլերը առիթը այլ շէնքի մէջ, սակայն ճեմարանը ոգի է, մղիչ ուժ, իր անձնակազմով յատուկ կնիք կը դրոշմէ նոր սերունդներու հոգիներուն վրայ: Ան ոչ միայն կը մատուցէ գիտութիւն, այլ

մէկ գոհողութիւն ինչպէս մեզի համար: Դուք գիշերներ լուսուցիք մեր հանգիստը ապահովելու համար, ցերեկները անողով աշխատեցաք կեանքի լուսադոյն պայմանները ապահովելու համար: Ձեր գոհողութիւններուն եւ նուիրումին դիմաց այսօր մենք կը խոնարհինք:

Սիրելի՛ ծնողներ, ձեր եւ ճեմարանին նպատակն է պատրաստել եւ հանրութեան ծառայութեան յանձնել գիտակից սերունդներ: Սերունդներ, որոնք պիտի վստահուի հայ ազգի հոգեւոր եւ նիւթական արժեքներու պահպանման ու զարգացման աշխատանքը: Այս սերունդները պիտի փոխանցեն ջահը եւ հայ ազգի



նաեւ կը նպաստէ սերունդի ազգային գիտակցութեան դրսեւորման, մարդակերտման եւ հոգեկան բարձրացման:

Լ. Շանթ կ'ըսէ. «Մարդ իր լի արժեքը ստանալու համար պետք է ըլլայ իր ժամանակի մարդը՝ իր ատենուան գիտական բարձրութեան վրայ կեցած»:

Բիւր շնորհակալութիւն մեր սիրելի ուսուցչական կազմին, դաստիարակներուն եւ տնօրէնութեան, որոնք անսպառ նուիրումով ու լայնախոհ ներողամտութեամբ միշտ պատրաստ են օգնելու մեզի, նոյնիսկ մեր ծնողներուն հետ ուղեկից դարձան միջնակարգական քննութեան վարժարանները եւ գուրգուրոտ խրատներով միշտ քաջալերեցին մեզ:

Իսկ ձեզի՛, սիրելի՛ ծնողներ, թէ՛ շնորհակալութիւն, թէ՛ շնորհաւորութիւն: Այժմ յուզումնախառն պահեր կ'ապրինք բոլորս: Մեր դպրոցական բոլոր հանգրուաններուն ձեր ջերմութիւնը եւ անսպառ սերը ողորկեցին մեզ: Ո՛չ ուժ, ո՛չ հանգիստ, ոչ

պատմութեան փառահեղ էջերու թիւը աւելցնեն: Այս սրբազան գործը սփիւռքի մայր գաղութ Յալէպի մէջ վստահուած է Ազգային Քարէն Եփփէ Ընկերային եւ ճեմարանը գերազանցօրէն կ'իրականցնէ այս առաքելութիւնը:

Գեղեցիկ են զգացումները, հրապուրիչ են իտեալները, կը մաղթեմ, որ անցնինք խօսքէն անդին եւ դառնանք անվերապահ գործակիցները Ընկերային առաքելութեան: Թող ճեմարանը անսասան մնայ եւ միշտ նոր շունչով ծաղկեցնէ մեր ազգային եւ մտաւորական անդամները:

Մենք՝ շրջանաւարտներս, պայծառ ճակատներով, լուսավարացեալ կը նայինք գալիքին, ապագային եւ կը խոստանանք, ուր որ ալ գտնուինք, միշտ ճեմարանը մեր հոգիին մէջ պիտի ապրի եւ պիտի շարժինք ու գործենք ճեմարանի դաստիարակութեան թելադրանքներով, անոր հայակերտ մթնոլորտի ներշնչումով:

Փա՛ռք քեզ, ճեմարա՛ն:

ԱՌՆՉՈՒԹՒՄ, ԹԷ՛

ԱՌՆՉՈՒԹԻՄ

Արմենակ Եղիայեան

Ասի բաղադրեալ բառ մըն է, որուն բաղադրիչներն են՝ **առ-ինչ-ու-թիւն**:

Առնչութիւն դառնալով՝ **ինչ** բաղադրիչին **ի** ձայնաւորը կը սղի ու փոխարէնը կը լսուի **ը** ձայնաւորը, որ ոմանք չեն գրեր (**առնչութիւն**), իսկ ուրիշներ կը գրեն (**առնչութիւն**)՝ մէկ միաւորով աւելցնելով բառամէջի **ը**-ի գործածութիւնը, որուն այնքան հակառակ է մեր լեզուն եւ էր... Մտորոյ Մաշտոց ի՛նքը:

Այս պարագային եւս երկուութեան սերմը կը գտնենք, դժբախտաբար, «Նոր Յայկագեան»-ի մէջ, ուր բառս հաւասարապէս կիրարկուած է երկու ձեւերով. բայց իրապէս պէ՛տք է այս եզակի գործը այսպէս նման երկուութիւններու համար: Պէտք չէ մոռնալ, որ «Նոր Յայկագեան»-ը ուղղագրական ձեռնարկ մը չէ, այլ ան յղացուած է իբրեւ հարազատ պատկերը, հայելին, անդրադարձը մեր անցեալի մատենագրական ժառանգին, ուր նման երկուութիւններ անխուսափելիօրէն յառաջացած են, ինչպէս պետք է ըլլայ պարագան աշխարհի բոլոր հին մատենագրութեանց. անոր հեղինակները պարզապէս ջանացած են հարազատօրէն ցոյցանել այդ երկուութիւնները կամ բազմածեւութիւնները: Կաճառ մը, լեզուաբանական հիմնարկ մը կամ եզրաբանական կոմիտէ մը պետք է ընէր այդ գտնումի աշխատանքները. ահա ա՛յս է որ պակասած է արեւմտահայերու, մինչ արեւելահայերը ունեցած են այդ բախտը, որուն շնորհիւ ալ արեւելահայերէնի բառապաշարը գրեթէ զերծ է անբախտ ու գայթակղեց ու իջ բազմաձեւութիւններէ:

«Նոր Յայկագեան»-ը ունի **առինչ**, որ հաւասարապէս տուած է **առնչից** եւ **առինչից**. ապա ունի **առինչունակ**, բայց նաեւ **առնչունակ**, այլեւ ունի **առնչութիւն** (Ա. հատոր, էջ 305բ). յատկանշական է, որ այս վերջին բառը առանձին բառայօդուածի չէ վերածուած: Աշխարհաբարը աւելցուցած է **առնչել**, **առնչուիլ**, **առնչակից**, **առնչակցիլ**, **առնչաբար**, **առնչական**, **առնչում**:

«Առնչել»-ը ունի միայն **առնչակից**, Գաբամաճեան՝ **առնչակից** եւ **առնչութիւն**, եւ այնուհետեւ բոլոր բառարանագիրները՝ Գայայեան, հայր ճիգմեճեան, Տէր Խաչատուրեան այս եւ արմատակից բառերը գրած են առանց **ը**-ի: Բայց ահա Բենիամին Թաշեան 1963-ին կը պաշտպանէ **առնչութիւն** ձեւը՝ ծանօթ հիմնաւորումով: Որմէ ետք գայն **ը**-ով կը գրէ հայր Կռանեան եւս՝ **առնչուիլ** եւ **առնչութիւն**: Արեւելահայերը **ը**-ով ոչ մէկ միաւոր ունին:

Եթէ **ը**-ով գրութեան բառարանային համեմատութիւնը շատ համեստ է, ապա արեւմտահայ իրականութեան մէջ այդ համեմատութիւնը բաւական բարձր է. գոնէ 50 տոկոս, եթէ ոչ ավելի: Անշուշտ պետք

չէ կարծել, թէ հայր Կռանեանին կը պարտինք այս բարձր համեմատութիւնը: Այս ալ արեւմտահայու հոգեբանութեան մէկ շատ հարազատ ցոյցումն է. ան կը սիրէ շեղիլ սովորական ճամբայէն ու անցնիլ նեղ կածաններէ. այս պատկերն ալ կը գտնենք մեր սերտած բառին առթիւ:



Բառս եւ անոր բաղադրեալները **ը**-ով գրողներուն հիմնաւորումը ա՛յն է, որ միավանկ արմատներու բառասկզբի **ի**-ն բարդումի եւ ածանցումի առթիւ կը հնչին անփոփոխ **ը**-ի. օրինակ՝ **ինչ-ընչեղ**, **ընչաքաղց**, **ընչագորկ**, **ինձ-ընձենի**, **իղձ-ըղձալի**, **ունդ-ընդեղէն** եւ այլն. ուրեմն՝ **առինչ-առնչութիւն**: Թէեւ այս վերջին բերուած օրինակները կը տարբերին անով, որ ասոնց մէջ հնչին անփոփոխ **ի**-ն կը գտնուի բառին սկզբը, իսկ այդ դիրքի վրայ **ը**-ի գեղջումը կ'աղաւաղէ բառերը. անընթացնել են՝ **նչեղ**, **նձենի**, **ղձալի** եւ այլն. այս պատճառով ալ այս դիրքին վրայ **ը** տառի առկայութիւնը անհրաժեշտութիւն է: Մինչդէռ **առնչութիւն** բառին մէջ **ը**-ի բացակայութիւնը որեւէ աղաւաղում չի յառաջացներ: Ահա այս հիմամբ ալ վաղ գրաբարեան օրերէն նման **ը** մը աւելորդ տեսնողներ եղած են, որոնք վրայ աւելցած են աշխարհաբարի մէջ այդ **ը**-ն անտեսողները: Յարցը ինքզինքը այսպէս ալ լուծած ըլլալ կը թուէր՝ նկատի առած այն լայն կիրարկութիւնը, որ, սկսած գրաբարի օրերէն, թօթափած է **ը** միջանկեալ տառը: Սակայն, ինչպէս ըսի, բաւական մեծ է թիւը անոնց, որոնք կառչած են այդ **ը**-ին:

Ի նպաստ անոր գեղջումին՝ բերենք հետեւեալ հիմնաւորումը եւս.

Բառակազմական տեսակետէ՝ **առ-ինչ** եւ **ոչ-ինչ** երկու կաթիլ ջուրի պէս կը նմանին իրարու. ըստ այսմ ալ եթէ կարելի է կամ պետք է գրել **առնչութիւն**, ապա պետք է կարելի ըլլայ նաեւ գրել **ոչնչութիւն**: Արդ, մենք չենք պատկերացներ արեւմտահայ մը, որ **ոչնչութիւն**, **ոչնչական**, **ոչնչային**, **ոչնչաբան**, **ոչնչանալ** բառերէն մէկը կամ միւսը փորձուէր գրել **ը**-ով. ինչո՞ւ, - չենք գիտեր ին-

Շար.՝ 12 14

ՊԱՇՏՏՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

ՍՕ Խաչի Ազգ. Պատասպարանը կարիքը ունի գիշերապահուիլի:

Յետաքրքրուողները կրնան հեռաձայնել ամէն օր ժամը 10:00-էն 4:00 հետեւեալ թիւին. - 4442022:

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՔ-2019»-Ի ԾՐԱԳԻՐԸ ԱՄԲՐՏԻՆ ՀԱՍԱԲ

Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միության նախաձեռնությամբ արդեն 25-րդ անգամ ըլլալով տեղի ունեցավ ուսանողական հաւաք (ֆորում): Աշխարհի գանազան երկրներէ հայրենիք ժամանած երիտասարդներուն մասնակցութեամբ հաւաքի պաշտօնական բացումը տեղի ունեցավ 15 Յուլիսին:

Գալստիա: Երիտասարդները նախ այցելեցին «Հարաբար Հարպետ» ընկերութիւն, ծանօթացան արցախեան գորգերու պատմութեան, կարելիութիւն ունեցան գորգագործ կիներու հետ զրուցելու և անոնց հետ գորգ գործելու:

Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովին մէջ տեղի ունեցաւ:



Երկշաբաթայն ծրագիրին ընթացքին շուրջ 35 երիտասարդներ, որոնց մէկ մասը առաջին անգամ կը գտնուի հայրենիք, կարելիութիւն ունեցան

Գալստիա Հանրապետութեան Ազգային Ժողովի փոխնախագահ Վահրամ Բալայեանի հետ հանդիպում մը: Համազգայինի ֆորումի



ծանօթանալու Հայաստանի և Արցախի ներքին կեանքին, այցելելու պատմամշակութային, կրթական

մասնակիցները ծանօթացան արցախեան շարժումի պատմութեան և կարելիութիւն ունեցան ունկնդրելու զիրենք հետաքրքրող հարցումներուն պատասխանները:

Յագեցած ծրագիրին ընթացքին, «Համազգայինի Ուսանողական Հաւաք-2019»-ի մասնակիցները այցելեցին գօրանոց և Արցախի տեսարժան վայրեր: Զօրանոցին մէջ զինուորները գեղարուեստական ծրագիր մը ներկայացուցին: Ծրագիրը կ'ընդգրկէր ազգային, հայրենասիրական և ժողովրդական երգեր: Ֆորումականները ևս մաս կազմեցին համերգին՝ երգելով ու պարելով զինուորներուն հետ:

Համազգայինի հաւաքին պատասխանատուները յայտնեցին, որ, ականատես ըլլալով երիտասարդներու ոգեւորութեան ու հայրենիքի մասին անելի իմանալու ու տեսնելու ձգտումին, անգամ մը ևս համոզուած են, որ ծրագիրին հիմնական առաքելութիւնը ի կատար ածուած է:

«Ապառաժ»



կրթողներ, թանգարաններ, կապեր հաստատելու այլ շրջաններու հայ երիտասարդներու հետ:

Ծրագիրի վերջին 3 օրերը ֆորումի մասնակիցները անցուցին Ար-

ԻՐԱՆԸ...

Մկրտչ Էջ 5

Երկրի իշխանութիւնները Հայաստանը կարող են մի պահ դիտարկել որպէս ոչ իւրային երկիր: Թէ՛ դա Թեհրանի հերթական տեղեկատուական-հոգեբանական ճարպիկ գործողութիւնն է, այս անգամ՝ ուղղուած Հայաստանի դէմ:

Սրանով չի սահմանափակուում մեր մտահոգութիւնը. կրկին հիմնուելով ֆիլմի ներկայացրած տուեալների վրայ արդեօք կարող ենք բացառել այն վարկածը, ըստ որի՝ ամերիկեան կողմը մտահոգուած է Իրանի սահմանակից երկրներում, այդ թւում՝ Հայաստանում ամերիկեան կողմի դէմ Թեհրանի հետախուզական գործունեութեան աշխուժացմամբ: Սակայն այս ամէնում ի յայտ է գալիս շատ անելի խոր մի մտահոգութիւն, որ մեր երկիր է տեղափոխուում հակամարտող կողմերի հետախուզական պայքարը՝ դարձնելով այդ դիմակայութեան թատերաբեմ: Յամենայն դէպս, եթէ ուռնացնում ենք ստեղծուած իրավիճակը, ապա նուազագոյնը չպետք է բացառել այդ բեմագրութիւնը:

Խօսակցութիւններ են պըտուում, որ Իրանում զգուշաւորութեամբ են մօտենում Հայաստանում տեղի ունեցած յեղափոխութեանը: Գուցէ մտավախութիւն կայ, որ մեր երկրում տեղի ունեցած յեղափոխական շարժումը գունաւոր յեղափոխութիւնների տրամաբանութեան մէջ է: Եթէ շարժուենք այդ տրամաբանութեամբ, ապա Իրանում կարող են զգուշանալ, որ Հայաստանում ուժեղացել է ամերիկեան գործօնը, կամ անուազն կայ նման բեմագրութեան զարգացման նախադրեալ:

Անդրադառնանք 10 Յուլիսին ՀՀ ջերմութային համակարգում տեղի ունեցած տատանումներին ու դրանց հնարաւոր պատճառների հարցին: Հայկական կողմի առաջ քաշած հիմնական վարկածներից մէկով՝ յաճախականութեան ուժեղ տատանումները կարող էին պայմանաւորուած լինել Իրանի ջերմութի համակարգում տեղի ունեցած վթարով: Ինդիքն այն է, որ Հայաստանի և Իրանի ջերմութի համակարգերը համակարգուած են, հետեւաբար՝ յաճախականութեան տատանումները փոխադարձ ազդեցութիւն են թողնում:

Յիշեցնեմ, որ յաճախականութեան տատանումների հետեւանքով անջատուել էին Հրազդանի ՋէԿ-ի

5-րդ պլուկը, իսկ յետոյ՝ նաեւ Երեւանի ՋէԿ-ը և անելի փոքր կայաններ:

Ինդիքի հետ կապուած փորձագիտական տարբեր հարթակներում քննարկումներ էին ընթանում, փորձում բերել միջադէպի հետ կապուած նաեւ այլ հնարաւոր բեմագրութիւններ: Առաջ քաշուած հիմնական բեմագրութիւններից մէկով՝ Հայաստանի Ջերմութի համակարգում յաճախականութեան տատանումները դիտուում էին որպէս Իրանի կողմից խափանարարութեան հետեւանք:

Եթէ կրկին առաջնորդուենք այն տրամաբանութեամբ, որ ԱՄՆ-Իրան ճգնաժամում, ըստ Թեհրանի, Հայաստան սկսում է դիտարկուել որպէս ոչ իւրային երկիր, որտեղ աշխուժացել է ԱՄՆ համակարգչային հետախուզութեան գործունեութիւնն ընդդէմ Իրանի, ուստի այդ քայլով Թեհրան նախագրուացնում է Երեւանը հնարաւոր վտանգների ու դրանց զսպման անհրաժեշտութեան մասին:

Յիշեցնեմ նաեւ, որ նախորդ տարուայ Յուլիսի 3-ին խոշոր վթար էր տեղի ունեցել նաեւ Ատրպէյճանի Մինգչաուրի ՋէԿ-ում, ինչի հետեւանքով Ատրպէյճան գրեթէ ամբողջութեամբ հոսանքազրկուել էր: Այդ ժամանակ նոյնպէս փորձագետները վթարը կապում էին հնարաւոր խափանարարութեան հետ: Պատահականութիւն էր, արդեօք, այն, որ Մինգչաուրի ՋէԿ-ում միջադէպը գրեթէ համընկել էր ընդամենը օր առաջ՝ Յուլիսի 2-ին Ատրպէյճանի կողմից նախաձեռնուած՝ գօրքերի տարբեր տեսակների մասնակցութեամբ լայնածաւալ գօրավարժութիւնների հետ: Այդ շրջանում նոյնպէս շրջանառութեան մէջ էր դրուել իրանական հետքը: Խօսուում էր այն մասին, որ կրկին ԱՄՆ-Իրան դիմակայութեան զարգացման այդ փուլում Թեհրան տրամաբանօրէն խուսափում էր իր սահմանակից հատուածներում ուղեւորներում, ժողովրդական լեզուով ասած՝ սեփական քթի տակ, գործ ունենալ լարուածութեան նոր օճախի հետ: Գուցէ այդ քայլով Թեհրան նախագրուացնում էր Ալիեւը՝ գերծ մնալ իրավիճակի հնարաւոր ապակայունացման փորձերից: Եւ այստեղ հարց է առաջանում՝ արդեօք որեւէ կապ կայ Մինգչաուրի ՋէԿ-ի ու Հայաստանի ջերմութի համակարգում տեղի ունեցած վթարների տրամաբանութիւնում: Գրեթէ չի խօսուում, որ գուցէ երկու դէպքում էլ աշխատել է նոյն ձեռագիրը:

«Երկիր»

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Պարոնեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՅՈՎՀԱՆՆԷՄ ՊԱՐՈՆԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի բառասուկի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 11 Օգոստոս 2019-ին, յաւարտ Ս. և Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Կիլլաներ -Հայէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահէն ներս:



ԽԱՉԲԱՌ (ՄԽ 305)

Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Ն Բ



	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- 1- Հեռաձայնի ականջի մաս: Արցախեան ազատամարտիկ, որ «Մեծ Մռռկից Մինչ Հորադիզ, փառքի ծամբայ ես անցել» երգը նուիրուած է իր յիշատակին:
 - 2- Նոյնատեսակ թռչուններու խումբ: Հիմա: Կրկնուած բաղաձայններ:
 - 3- Տառի մը անունը: Հակառակ լեզուով մը այր: Արհամարհանքի բացակայութիւն:
 - 4- Ձրային գագան: Կոճերէ կազմուած նաւակ:
 - 5- Սահմանել, յատկանշել:
 - 6- Հակառակ Սիամանթոյի ծննդավայրը: Հակառակ՝ քիչ:
 - 7- Հակառակ՝ յափշտակիչ թռչուն: Սլացք, եռանդ:
 - 8- Իրարայայջորդ տառեր: Կոկորդային խեղդուած ձայն: Ձայնանիշ:
 - 9- Հակառակ՝ գէշ: Մաղձ արտադրող մարդու մարմնի գործարան:
 - 10- Հակառակ՝ տարածքի միաւոր: Հակառակ՝ իրարայայջորդ տառեր:
- Սուրիահայ գրողներու տարեգիրք:
- 11- Դուռի թեւ: Սրբուհի մը:
 - 12- Կարեկցութիւն:

Ուղղահայեաց

- 1- Գիւղ, ՀՀ Կոտայքի մարզին մէջ, Հրազդանէն 7 քմ. հեռաւորութեամբ, ուր կը գտնուի Ս. Յակոբ մատուռը եւ աւագակի բուժիչ ջուր: Ռամկորեն՝ այր:
- 2- Ընդարձակ սենեակ: Յորդահոս:
- 3- Կրկնուած ձայնաւորներ: Վերջածանց: Ձիու հանդարտ վագր:
- 4- 8200: Կրկնուած բաղաձայններ: Փոքրացնող մասնիկ: Կրկնուած ձայնաւորներ:
- 5- Իրարու կցել: Իրերայայջորդ տառեր:
- 6- Տառի մը անունը: Հակառակ՝ տարածքի միաւոր: Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ:
- 7- Միայն: Արցախեան ազատամարտիկ, ծնած Սուրիոյ Գամիշլի քաղաքը:
- 8- Ուսանող:
- 9- Ունկնդրես: 5004: Անձնական դերանուն:
- 10- 4030: Էական բայ:
- 11- Հայոց չորրորդ ամիսը: Արտասուել: 5400:
- 12- Մահուան ժամ: Ծոխ, առատ:

ՍՈՒՏՈՒՆԵՐ (ՄՍ 304)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

			9		3			6
4		3		2				8
	6			1				9
5		9						
6	3						5	7
						1		4
			9		3	7		
	1		8		4			5
	2		5		7			

Պատրաստեց Մարինա Զիւլբրոշեան-Պօղիկեան

ՊԱՅՈՒՄԾ ԲԱՌ (ՄՊ 75)

Պարոյր Սեւակի բանաստեղծութիւնները ջնջելով գտէ՛ք պահուած բառը: Պահուած բառը 9 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Սեւակի բանաստեղծութիւններէն մէկը:

ա	պ	ւ	օ	ր	օ	տ	ա	ր	գ
լ	յ	ա	ն	բ	ա	յ	ց	ա	լ
ն	ք	բ	ա	ա	ա	ւ	ի	դ	խ
ե	ր	ի	ն	ա	ւ	ք	ա	ա	ա
ա	ն	դ	չ	ւ	ն	ա	գ	չ	պ
ս	պ	ք	ն	ա	բ	ք	կ	ն	ա
ի	ն	ր	ա	ւ	յ	ե	ը	ւ	ն
ր	յ	ա	ե	ա	ս	ն	ն	ւ	յ
ն	պ	ը	հ	լ	ե	ն	ք	ը	ա
յ	ձ	ե	ռ	ք	ե	ր	ը	ե	ւ

«Գլխապոյտ», «Քիչ ենք Բայց Հայ ենք», «Աղաչում եմ», «Պատանքի Պատանքը», «Սօր Ձեռքերը», «Օտար Սիրոյ Այբուբենը», «Ապրել», «Որդուս», «Նամակ»

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱՉԲԱՌ (ՄԽ 304)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	կ	ե	է	ա	ն	ի	ս	ւ	մ	ա		
2	ա	ր			ա	ր	ե	ն	ւ	լ	2	
3	ր	ա	ի	տ		ա	ր	ա	գ	ի	լ	
4	թ	ն	դ	ի	ւ	ն		ի	ւ	2	ի	թ
5		ի	ի	կ	ա	տ	ի	ր		ն	օ	
6	ա			թ	ի	լ	ր		ն	ք		
7	ր	ե							ս			
8	տ	ա	ր	տ	ա	մ	ն	ւ	թ	ի	ւ	ն
9	ա	կ	ա	ն	ա	կ	ն	ւ	ն		ն	ա
10	հ		ս	ա				ի	լ		ն	
11	ա	լ		ն	ս	ե	մ		է	ա		ի
12	ն	ա	ր	կ	ի	ս		ա	ք	լ	ն	ր

ՍՈՒՏՈՒՆԵՐ (ՄՍ 303)

5	8	9	1	6	2	4	7	3
1	7	4	9	8	3	5	6	2
2	6	3	4	7	5	9	8	1
8	3	7	2	9	6	1	5	4
4	2	6	8	5	1	7	3	9
9	5	1	3	4	7	6	2	8
3	9	5	6	1	8	2	4	7
7	1	8	5	2	4	3	9	6
6	4	2	7	3	9	8	1	5

ՊԱՅՈՒՄԾ ԲԱՌ (ՄՊ 74)

Պահուած բառն է՝ «Ետ Դառնար Հիմա»

ՀԱՆԴՊՈՒՄ ՊԵՆԿԻԲԱՅԻ...

Սկիզբ՝ էջ 3

բացի պատուիրակութեան անդամները առիթ ունեցած են ծանօթանալու Ալսթ քաղաքի պատմութեան, այցելելու քաղաքի պատմական վայրերը:

Երկու քաղաքներու ներկայացուցիչները մտադիր են ապագային զարգացնել մշակութային համագործակցութիւնը:

ԱՄՏՐԱԼԻՈՅ...

Սկիզբ՝ էջ 3

իրաւական երեսներուն եւ տազնապի խաղաղ լուծման շուրջ արցախեան կողմին դիրքորոշման:

Ընդունելութեան ընթացքին Արցախի արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեան եւ Արցախի Ազգային Ժողովի «Դաշնակցութիւն» խմբակցութեան անդամ Դա-

ւիթ Իշխանեան անդրադարձ կատարած են Արցախի եւ Աւստրալիոյ միջեւ տարբեր մակարդակներով գործակցութեան զարգացման կարելիութիւններուն:

ՀԱՆԴՊՈՒՄ ԱՄՏՐԱԼԻՈՅ...

Սկիզբ՝ էջ 3

Նաեւ Արցախի միջազգային համագործակցութեան զարգացման հոլովոյթին մէջ արձանագրուած ձեռքբերումներուն, քննարկուած են այդ բնագաւառին մէջ Նոր կարելիութիւնները:

Հանդիպումին մասնակցած է նաեւ Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովի պատգամաւոր Դաւիթ Իշխանեան, Աւստրալիոյ մէջ Արցախի մնայուն ներկայացուցիչ Զայար Միքայելեան եւ Աւստրալիոյ Հայ Դատի յանձնախումբի գործադիր տնօրէն Հայկ Գայսերեան:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ

Այս շաբաթ աստղերը ի նպաստ ձեզի պիտի շարժին: Հրաշալի շաբաթ է գործնական բանակցություններու եւ նոր գործընկերություններ հաստատելու համար:



ՑՈՒԼ

Թեւ շաբթուան ընթացքին շարք մը դժուարություններ պիտի դիմագրաւէք, սակայն, հաճելի պահեր պիտի ապրիք: Մասնագիտական ոլորտին մէջ ձեր դիմագրաւած հարցերուն նոր լուծումներ որոնեցէք:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Նախքան որեւէ նոր գործի ձեռնարկելը՝ վստահ եղէք, որ ինքնուրոյն կրնաք աւարտին հասցնել զայն: Անբարենպաստ շաբաթ է նիւթական հարցեր լուծելու համար:



ԽԵՑՁԵՏԻՆ

Ուշադրություն դարձուցէք նյութիկ շրջապատին կողմէ անտեսուած մանրուքներուն վրայ: Այս շաբաթ մտերիմներու հետ լաւ ժամանակ պիտի անցընէք:



ԱՌԻԾ

Համարձակ եղէք եւ նոր գործերու ձեռնարկեցէք: Ճիշդ է որ ոչ դժուարություններ պիտի յառաջանան, սակայն ձեր ծրագրերը ընդունելութիւն պիտի գտնեն:



ԿՈՅՍ

Ըստ կարելոյն խուսափեցէք մրցակցային պայքարի մէջ ներքաշուելէ: Կեդրոնացէք ձեր մասնագիտական դիրքը ամրապնդելու վրայ:



ԿԵՒՈՔ

Ձեր զգացական կեանքը անկայուն է, տրամադրությունը՝ փոփոխական: Շաբթուան երկրորդ կէտը անելի հեզասահ պիտի ընթանայ:



ԿԱՐԻՃ

Ճշդ պահանջներուն, զգօնութիւնն ու մանրուքներուն անգամ կարեւորութիւն տալը կ'օգնեն խուսափելու շարք մը դժուարություններէ:



ԱՂԵՂՆԱՌՐ

Հոգեկան ձեր հաւասարակշռությունը կը կորսնցնէք, եթէ ըսի-ըսաներուն կարեւորութիւն տաք: Միշտ յիշեցէք, որ շարք մը հարցեր ժամանակի ընթացքին ինքնաբերաբար կը լուծուին:



ԱՅԾԵՂՋԻՐ

Յաջողութեամբ լի շաբաթ մը պիտի դիմաւորէք: Ձեր անսպառ հմայքը եւ մարդիկ ճանչնալու ունակութիւնը, գործնական իմաստով օգտակար պիտի ըլլան:



ՋՐՅՈՒ

Եսասեր մի՛ ըլլաք եւ ձեր անմիջական շրջապատէն անպայման մի պահանջէք ձեր փափաքներու անյապարհ գործարծումը:



ՋՈՒԿ

Արկածախնդրութեան մի՛ դիմէք այս շաբաթ: Այլոց բացասական մտեցումներու ազդեցությունը նուազագոյնի կրնաք հասցնել, եթէ շրջապատէք եւ խելամիտ ըլլաք:



Շաղիկ Գաբրիէլեան

Այսուհետեւ սնդառութեան մասնագետ Շաղիկ Գաբրիէլեան երկշաբաթական հերթականութեամբ «Գանձասար»-ի այս սիւնակով առողջ սնդառութեան եւ սնդականոններու մասին տեղեկություններ պիտի հրամցնէ մեր ընթերցողներուն:
Այս նիւթին մասին ձեր հարցումները կրնաք ուղղել հետեւեալ հասցէին kantsasarweekly@hotmail.com, կամ հեռաձայնել հետեւեալ թիւին 0937066279 (whatsapp):
Ձեր հարցումներուն պատասխանները կ'ընթերցէք «Գանձասար»-ի այս սիւնակով:



ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ՄՆՈՒՅՈՒՄԸ

Ինչպէս գիտենք, ներկայ ժամանակներու իզական եւ առական սեռի ներկայացուցիչները մեծ մասամբ կը հետեւին մարզանքի: Մեր օրերու մարզիկը միայն յատուկ մարզաձեւի մը մասնագիտական օրէնքներով հետեւող չէ, ինչպէս օրինակ լողորդը, պասքէթպոլիստը, ֆութպոլիստը, թենիսիստը եւ այլն:

Շատեր կը հետեւին մարզանքի մէկէ անելի պատճառներով: Ոմանք իրենց ծանրութիւնը կայուն պահելու համար, որոշ չափով անելցնելու կամ նուազեցնելու համար: Ուրիշներ կ'ունենան որոշ հիւանդութիւններ, հետեւաբար բժիշկին թելադրանքով կը հետեւին մարզանքի:

Բոլոր այս պարագաներուն ալ ճշգրիտ սնունդը նոյնքան անհրաժեշտ է: Գոյութիւն ունին ընդհանրացած սխալներ, որոնք կրկնուելու պարագային առողջական հարցեր կրնան յառաջանել:

Օրինակ՝ անոնք, որոնք մարզանքի կը դիմեն մկան ձեւաւորելու համար, իրենց լսած խորհուրդներու հիման վրայ, իրենց օրուան սնունդէն ամբողջովին կը ջնջեն բնածխաջրատը (carbohydrates), այսինքն՝ հացը, գետնախինձորը, կորեկը, բրինձը եւ այլն, որոնք կը համարուին մարմնին ներուժ հայթայթող հիմնական աղբիւրը, փոխարենը կը սկսին ուտել մեծ քանակով սպիտակուց (protein) (հաւկիթ, թոն, մսեղէն): Սպիտակուցին (protein) հիմնական պարտականութիւնն է նպաստել մկաններու աճին, փոխարինել վնասուած հիւսուածքները (damaged tissues), իսկ անոր երկրորդ պարտականութիւնը ջերմութ (energy) հայթայթելն է:

Այս պարագային, անոնք որոնք իրենց սնունդէն ամբողջովին կը ջնջեն բնածխաջրատը (carbohydrates), իրենց մարմններուն, ներուժ հայթայթելու համար պիտի ստիպուին օգտագործել մկաններուն մէջ գտնուող սպիտակուցը եւ իրենց մօտ պիտի յառաջանայ մկանային թուլացում: Մարզիկները ունին մեծ եւ ուռած մկաններ եւ կ'ունենան միայն սպիտակուցի տեսակներ:

Ոմանք կը գործածեն սպիտակուցներու խառնուրդ (protein shakes), որ ունի զանազան տեսակները: Կարգ մը տեսակներ կը պարունակեն այլ սնուցիչներ: Ոմանք կը գործածեն արգիլուած նիւթեր, որոնք շատ վտանգաւոր են, օրինակ՝ steroids-ը, որ կը նմանի տղամարդոց testosterone հորմոնին: Երբ այս հորմոնին քանակը անելնայ մարմնին մէջ, մկանները կը ծաւալին:

Այս իսկ պատճառով, երբ անոնք կը դադրին մարզանքէ, մկանները կը կծկուին: Ոմանք կ'ունենան ուռած մկաններ, բայց միեւնոյն ատեն իրենց մարմնին ճարպին քանակը բարձր կ'ըլլայ:

Մարզանքի չհետեւող սովորական մարդոց մօտ բնածխաջրատի կարիքը 50% է: Անոնք այդ մէկը կը ստանան իրենց առօրեայ սնունդէն, իսկ մարզիկներու պարագային, որոնք երբեք ժամէ անելի մարզանք կ'ընեն, օրուան բնածխաջրատի կարիքը կը հասնի 60-էն 70%-ի:

Ի՞նչ պէտք է ուտել մարզանքի երթալէն առաջ եւ վերջ

Կարգ մը մարզանքներու՝ երկար վազքի, ֆութպոլի, պասքէթպոլի, հետեւողները պէտք է մարզանքէն 2,5-3 ժամ առաջ ուտեն եւ իրենց սնունդը պէտք է ըլլայ բնածխաջրատ, մանաւանդ բարդ բնածխաջրատ՝ սեւ հաց, սեւ բրինձ, digestive կրկնեփուկ եւ այլն: Այս ուտեստները շաքարը արեան մէջ աստիճանաբար կը լուծեն եւ թոյլ չեն տար, որ անսիւլիւր վայրկեանին բարձրանայ: Շատ սխալ է մարզանքէն առաջ անուշեղէն, մեղր, տուրմ ուտել, որովհետեւ անոնք անմիջապէս պիտի բարձրացնեն անսիւլիւր եւ պատճառաւոր պիտի դառնան գերյոգնութեան:

Իսկ մարզանքի ընթացքին, մանաւանդ երկար մարզանքներու ընթացքին, կը նուազի glycogene-ը, այսինքն՝ մկաններուն եւ լեարդին մէջ պահուած շաքարը, որ մարմնին ջերմութ կ'ապահովէ:

Ուստի շատ կարեւոր է մարզանքը աւարտելէ անմիջապէս ետք (մանաւանդ եթէ ծանր մարզանք է) ուտել անսիւլիւր անմիջապէս բարձրացնող ուտելիքներ, ինչպէս՝ պանակ, մեղր, ճերմակ հաց, ուտել նաեւ սպիտակուց. օրինակ՝ հաւկիթ, թոն եւ մսեղէն:

Օրուան սպիտակուցին կարիքը, մարզանքի չհետեւող անձերու պարագային, իւրաքանչիւր 1 քիլոկրամ ծանրութեան 0,8-էն 1 կրամ է: Օրինակ՝ 70 քիլոկրամ ծանրութիւն ունեցող անձը պէտք ունի մօտաւոր 60-65 կրամ սպիտակուցի: Իսկ մարզիկներու պարագային, անոնք որոնք ծանրութիւն կը վերցնեն կարիք ունին յաւելեալ սպիտակուցի. օրինակ՝ 70 քիլոկրամ ծանրութիւն ունեցող անձը պէտք ունի 80-90 կրամ սպիտակուցի:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔՐՄԱՊԵՏ...

Սկիզբ՝ էջ 9

ու դժուար դերեր ստանձնեց նաև օփերաներու մէջ: Ունի բանաստեղծութիւններու երկու հատոր՝ «Արձակ երգեր» (1911, Պոլիս) եւ «Արեւոտ ճամբան» (1931, Փարիզ), նաեւ՝ վիպակներու գոյգ ժողովածուներ՝ «Երեք Վիպակներ» եւ «Յեթաւոտ Տոյ» (երկուքն ալ տպուած Ադրբայձան, 1945-ին), ուր կը ցույց տայ իր հոգի մը, քիչ մը թախիծով ու յոռետեսութեամբ պարուրուած: Մանկավարժութեամբ կ'աշխատակցէր «Յայրենիք» ամսագրին, «Յառաջ»-ին ու Ծառուկեանի «Նայիրի» շաբաթաթերթին: Թանկագին են իր յուշերը՝ Պերպերեան վարժարանի միջավայրէն ու մթնոլորտէն: Ուղեղային արիւնահոսութեան հետեւանքով մահացաւ 8 Նոյեմբեր 1960-ին, Փարիզ, 77 տարեկանին, աղքատ ու լքեալ: Գրագիտուհի Սիրան Սեզա ոգեկոչած է զինք «Նայիրի»-ի Ա. Էջին վրայ (27 Նոյ. 1960):

գ) ՕՆՆԻԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ, Շահանի երեք եղբայրը, ծնած՝ 1887-ին: Զմուտ երաժշտագետ, յօրինող, երգահան ու խմբավար, համալսարանաւարտ՝ Լոզանէն, մաթեմատիկոս-Ֆիզիքի մասնագիտութեամբ: Օննիկ թեւ-թիկունք եղաւ իր եղբոր՝ մանաւանդ երբ Պերպերեան վարժարանը Պոլսէն Գահիրէ փոխադրուեցաւ 1924-ին: 1938-էն ետք հաստատուեցաւ Փարիզ՝ հետեւողականօրէն տալով տարեկան նուագահանութիւններ: Հեղինակ է երաժշտական բազմաթիւ ու այլազան ստեղծագործութիւններու (ջութակի, դաշնամուրի, լարային նուագախումբի, երգչախումբի ու մենեթրոններու յատուկ): Ունի Հայկական Պատարագի ինքնուրոյն մշակում մըն ալ: Երաժշտագիտական յօդուածներով կ'աշխատակցէր Բիւզանդ. Թօփալեանի «Անդաստան» պարբերականին: Բազմակողմանի մշակոյթով օժտուած բարձրորակ մտաւորական մըն էր: Մահացաւ Փարիզ, 8 Սեպտեմբեր 1959-ին: Գեղամ Զերեթճեանի գրի առած մահագրականը «Անդաստան»-ի մէջ (1960-ի թիւ), լաւագոյն կը բնորոշէ Օննիկ Պերպերեանի երգահանի ծիրանը ու անոր մշակած երաժշտական երկերուն գեղագիտական եւ տոհմային խորքն ու բնոյթը:

դ) Ինք՝ ՇԱՐՎԱՆ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ, կրթական գործիչ, իմաստասէր, հոգեբան, գեղագետ, արուեստաբան, երաժշտագետ ու ներհուն մտաւորական: Հայր Պերպերեան իր բանաստեղծութիւններէն մեկուն մէջ իրեն ակնարկած է «Շահանս իմաստուն» արտայայտութեամբ: Շահան շարունակեց իր հօր սկսած կրթական փառաւոր գործը՝ զայն անելի՛ խորացնելով ու յառաջացնելով, նոր ժամանակներու լոյսին տակ: Իմաստասիրութեան կողքին՝ շարունակ պարապեցաւ նաեւ երաժշտութեամբ: 80-ի չափ յօրինումներ ունի՝ գանազան հայ բանաստեղծներու գործերուն վրայ (մէկ մասը հրատարակուած՝ Նի

տորը, անշատ հատորով, 1983-ին): Կազմած ու ղեկավարած է դպրոցական երգչախումբեր, տուած է համերգներ՝ սիրուն եւ որակաւոր յայտագրերով:

ե) ԱՐՏԱԲԱԶՂ ՊԵՐՊԵՐԵԱՆ, Շահանի անդրանիկ որդին, հանրածանօթ գեղանկարիչ ու արուեստագետ: Ծնած էր Վանա (Պուլկարիա) 1923-ին: Նկարչական իր առաջին ցուցմունքները ստացաւ եգիպտահայ նկարիչ Օննիկ Աւետիսեանէն: 1948-ի գարնան՝ 64 պատանւներով բացաւ իր անդրանիկ անհատական ցուցահանդէսը Պէրլուքի մէջ, արժանանալով տեղույն Ֆրանսաստառ ու հայ մամուլի խթանիչ գնահատանքին: 1949-ին հաստատուեցաւ Փարիզ, ուր մասնագիտացաւ արուեստի ու գեղանկարչութեան մէջ: Ցուցահանդէսներ տուաւ Ֆրանսայի, արտասահմանի ու Երեւանի մէջ եւ իրապաշտ վրձինով պատկերեց փարիզեան բնակարաններ, դիմանկարներ ու շարք մը հայ երեւելի դէմքեր (Մ. Մաշտոց, Մխիթար Հերացի, Մխիթար Գոշ եւ այլն): Իր կեանքին վերջին քսան տարիները անցուց Ավինտոն, ուր, ի միջի այլոց, դասեր կու տար հայ լեզուի եւ պատմութեան: Գործունէայ տարր մըն էր ԺԱՖ-ի շրջանակին մէջ: Իր մահուան առթիւ «Յառաջ» կը գրէր, թէ Արտասազը «բազմաթիւ գարդարանքներ ըրած է հայկական եկեղեցիներու մէջ՝ Ալֆրոյի, Լիոն, Տէսի, Փարիզ, Երուսաղէմ»: Գիտեցք նաեւ, որ Անթիլիասի մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին որմերը գարդարուած են իր վրձիններէն եւլած քանի մը գործերով, պատրաստուած՝ 50-ականներու սկիզբը, Յովսէփեանց կաթողիկոսի թելադրանքով: Մահացաւ 10 Յուլիս 2002-ին, Փարիզ:

Ինչպէս կը տեսնուի, ԵՐԵՔ սերունդ Պերպերեաններ շարունակաբար ապրած ու շնչած են արուեստով ու գիտութեամբ:

Մանկիկ Պերպերեան կը պատմէ, որ իրենց մօր կանխահաս մահէն ետք, հայրը իր վիշտը մոռնալ կը ջանար՝ ինքզինք յանձնելով գիրքերու մտերմութեան...: Ան կը խրատէր իր գաւակները. «Մէկ-մէկ գիրք առէք, նստէք, կարդացէք»: «Այդպէս ալ կ'ընէինք, խոր լռութեան մէջ: Պատանեկան այս խիստ կեանքն է, որ տուած է ինքնամոլորուելու, գիրքերու մէջ ապրելու, եւ կեանքն դուրս եւ վեր մնալու անջնջելի ճաշակը ամենուս ալ» («Երիտասարդ Հայրուհի» ամսագիր, Պէրլուք, Սեպտ. 1948):

Պերպերեաններու Սկիւտարի բնակարանը օրուան միկէն ուշ ժամերը ժամադրավայրն էր մտաւորականներու եւ արուեստասէրներու: Հոն յաճախ կ'այցելէին Խրիմեան, Իգմիրլեան, Ալեքսանտրեան եւ Մելքիսեդէկ Մուրատեան եպիսկոպոսները, Եղիշէ Դուրեան վարդապետը, Մկրտիչ Մեգպուրեան, բժ. Վահրամ Թորգոմեան, Յարութիւն Մրմըրեան, Սիմոն Գափամաճեան, Միհաս Չերազ, բանաստեղծ Եղիա Տէմիրճիպաշեան, Բիւզանդ. Զէչեան եւ այլն, եւ այլն: Այդ բնակարանը

օրն ի բուն կ'եռեւեկէր երաժշտութեամբ, բանաստեղծութեամբ ու փիլիսոփայութեամբ:

Հրաշալի այս մարդոց շառաւիղները ի կեանս են հիմա, ո՞ր եւ ինչպէ՞ս կ'ապրին՝ կ'անգիտանամ:

Բայց կը շարունակեմ հիանալ Ռեթես Պերպերեանով սկիզբ առած ընտանեկան այն տոհմիկ դաստիարակութեան վրայ, որ պտղաւի ոստեր ու բարունակներ արձակեց ամբողջ դար մը եւ անելի՛...:

(Շարունակելի - 2)

ՍՈՒՐԻԱԶՅ...

Սկիզբ՝ էջ 1

Գեղարուեստական բաժինով Հրակ Փայասեան եւ Վեհան Պարսումեան ասմունքեցին «Լիզպոնի Ողջակեզներին» քերթուածը: Յակոբ Յովհաննեսեան ներկայացուց Լիզպոնի դէպքին ժամանակագրութիւնը եւ օտար մամուլին արձագանգը: ՍԵՄ-ականները այնուհետեւ միասնաբար երգեցին Լիզպոնի հինգին նուիրուած երգեր:

Աւարտին, Տէր Չարեհ Զահանայ Շաքարեան իր պատգամը ուղղեց երիտասարդներուն, յորդորելով տեր կանգնիլ մեր ազգային արժէքներուն եւ իրաւունքներուն ու գարգանալով, ժամանակակից գիտական եւ արհեստագիտական նորութիւններով զինուելով, գանուք ծառայեցնել մեր ազգային շահերուն:

Ապա տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն:

ԱՐՅԱՆԻ...

Սկիզբ՝ էջ 1

վարական պետականաշինութեան գործընթացին ձեռքբերումները:

Ան կարելի էր համարեք հայկական սփիւռքի ներդրումը հայկական երկրորդ պետութեան գարգացման գործընթացին մէջ: Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ նաեւ Արցախի միջազգային ճանաչման եւ ատրպէճանա-դարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործընթացներուն:

Այնուհետեւ Մասիս Մայիլեան եւ Դաւիթ իշխանեան պատասխանեցին հաւաքի մասնակիցներուն բազմաթիւ հարցումներուն: Հանդիպումներուն կը մասնակցէին նաեւ Աւստրալիոյ Արցախի Հանրապետութեան մշտական ներկայացուցիչ Զայլար Միքայելեան եւ Հայ Դատի Աւստրալիոյ Յանձնախումբի նախագահ Հայկ Կայսերեան:

ՌՈՅՆԻ...

Սկիզբ՝ էջ 1

Անդրադառնալով տարածաշրջանի դէպքերուն, Ռոհանի շէշտեց, որ Սուրիոյ վերականգնումը, տեղահանուածներուն տունդարձը, Եւրոմանի խաղաղութիւնը եւ Պաղեստինի ժողովուրդին խորալիցեան յարձակումներուն դիմադրութիւնը տարածաշրջանի հիմնական մարտահրաւերները կը համարուին:

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

- Խմբագիր՝ Չարմիկ Զիլվերշեան-Պողիկեան
- Սրբագրիչներ՝ Չեփիւմ Պապիկեան-Աւագեան
- Յուշիկ Ղազարեան
- Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
- Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
- Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան
- Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան
- Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվերշեան
- Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանեսեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:

- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:

- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:

- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:

- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՌԵԱՆՆ ՈՒ ՊԱՐՍԵԼՈՆԱՆ ՄՆԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՍՈՒՂ ԱԿՈՒՄՔՆԵՐՈՒ ԶՆԳԵԱԿԻՆ ՄԵՋ

Forbes ամսագիրը կազմեց աշխարհի ամենն սուղ ակումբներուն ցուցակը: Առաջին տեղը գրավեց ամերիկեան ֆութբոլի ազգային լիգայի «Տալասա Բուրբուս» ակումբը, որուն նիւթական հաշուեկշիռը կազմեց 5 միլիարդ ամերիկեան տոլար: Խումբը նախորդ տարուան համեմատ 4 տոկոսով աճ արձանագրեց: Երկրորդ տեղը գրավեց Պեյսալի «Նիւ Եորք Եանքիզ» ակումբը (4,6 միլիարդ): Առաջին շնագեակին մէջ մտան նաեւ Սպանիոյ Ռեալ Մատրիտը (4,2 միլիարդ), Պարսելոնան (4,02 միլիարդ) եւ պասքեթբոլի «Նիւ Եորք Նիքս» (4 միլիարդ) ակումբները:




ՊԵՅԼ ԶԻՆԱՍԱՆԻ ՄԵՋ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԻՐ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Սպանիոյ մայրաքաղաք Ռեալ Մատրիտի Ուելզիացի խաղացող Կերըթ Պեյլ իր մարզական կեանքը պիտի շարունակէ Զինաստան: Ըստ վերջին տեղեկութիւններուն, սպանական խումբի մարզիչը յայտնած է Պեյլին, թէ պիտի տեղափոխուի այլ ակումբ, որովհետեւ ան տեղ պիտի չունենայ Ռեալին մէջ: Մարզական աղբիւրներ յայտնեցին նաեւ, որ Պեյլ լուրջ բանակցութիւններու մէջ է չինական Յոնգկոնգի Սուլինի ակումբի ղեկավարներուն հետ, եւ յառաջիկայ օրերուն պիտի ստորագրէ երեք տարուան պայմանագրութիւն: Կողմերուն մնացած է կարգադրել գործարքի քանի մը կէտ, որմէ ետք Պեյլ պիտի տեղափոխուի Զինաստան: Նոր ակումբին հետ ֆութբոլիստը տարեկան պիտի ստանայ 22 միլիոն եւրո: Աւելցնենք, որ Կերըթ Պեյլ սպանական խումբին միացաւ 2013-ին:



ՊԱՐՍԵԼՈՆԱՆ ՍԱՅՄԱՆԵՑ ԶՈՒՅՆԻՈՅԻ ԳԻՆԸ

Ըստ սպանական Mundo Deportivo լրատուամիջոցին, Սպանիոյ պիսոնեան Պարսելոնան սահմանեց 27-տարեկան պրագիլի խաղացող Ֆիլիպ Զոթիսիոյին փոխադրութեան արժեքը: Զարթալոնեական ակումբը մտադիր է ստանալ 100-120 միլիոն եւրո փոխան այն նոյն արժեքին, որ Պարսելոնան վճարած է Լիվըրպոլին երկու տարի առաջ, երբ պրագիլի խաղացողը միացաւ Պարսելոնային: Աւելցնենք, որ Մանչեսթըր Իւնայթըտ, Փարիզ Սան Ժերմանն ու Մանչեսթըր Սիթին կ'ուզեն Զոթիսիոն ներգրաւել իրենց խումբին մէջ:



ՃՈՔՈՎԻԶՆ ՈՒ ՖԵՏԵՐԸՐԸ ՊԻՏԻ ԶՄԱՍՆԱԿՑԻՆ ՄՈՆՐԵԱԼԻ ՄԱՍԹԸՐԶԻՆ

Աշխարհի արհեստավարժ թենիս խաղացողներու առաջին դիրքը գրաւող սերայիացի Նովակ Ճոքովիչ եւ աշխարհի երրորդը, գոլիցերիացի Ռոժըր Բենտոնը իրենց մասնակցութիւնը պիտի չբերեն Բանատայի Մոնրեալ



լիք նոյն մրցաշարքին:

Յիշեցնենք, որ Ուիմպլընի մրցաշարքի եզրափակիչին, Նովակ Ճոքովիչ Ռոժըրին յաղթեց 6-7 (5-7), 6-1, 6-7 (4-7), 6-4, 12-13 (3-7) արդիւնքով:

ՌԵԱԼԻ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՎՍԱՅ Է ՈՐ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅ ԶԵՆՔ ԲԵՐԵԼ ՓՈԿՊԱՆ

ESPN- լրատուամիջոցը հաղորդեց, որ Սպանիոյ մայրաքաղաքի Ռեալ Մատրիտ ակումբի ղեկավարութիւնը վստահ է, որ պիտի կարենայ գնել Մանչեսթըր Իւնայթըտի կիսապաշտպան Փոլ Փոկպան մինչեւ ամառնային փոխադրաշրջանի աւարտը: Փոլ Փոկպայի տեղափոխութեան համար պայքարը կը շարունակէ արքայական ակումբի գլխաւոր մարզիչ Չէստտին Զիտան, մանաւանդ երբ խումբը 7-3 արդիւնքով ծանր պարտութիւն մը կրեց Աթլետիքո Մատրիտին հետ կատարած բարեկամական մրցումին: Ֆրանսացի մասնագետը կրցաւ համոզել ակումբի նախագահ Ֆլորենթինօ Փերեզը, որ Փոկպան Ռեալին միացնելը շատ կարեւոր քայլ մըն է, մինչ այդ Փերեզ փափաք չունէր նիւթական մեծ գումար յատկացնել Փոկպային համար:



Աւելցնենք, որ անցեալ շաբթուան ընթացքին Փերեզ Զիտանին ըսած էր, որ Փոկպան գնելը գրեթէ անկարելի է, որմէ ետք Զիտան խնդրած էր փորձ մը եւս կատարել: Տեղին է յիշել նաեւ, որ անգլիական ակումբը Փոկպային համար պահանջած է 180 միլիոն եւրո:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Տէր Մանուէլեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռածայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՅՈՎՍԷՓ ՏԵՐ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ
մահուան սուգին:


Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 11 Օգոստոս 2019-ին, յաւարտ Ս. Եւ Ամմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Գալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին ԱՄԺ Տան «Նիւ Սպիտակ» ճաշարահէն ներս:




ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ ՄԱՐԻ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ



Հանգուցեալի մահուան Ա. տարեկիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 11 Օգոստոս 2019-ին, յաւարտ Ս. Եւ Ամմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Գալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահէն ներս:



ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ՍՐԲՈՅ ԲԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԵՉ

Կիրակի, 28 Յուլիս 2019-ի առաւօտեան ժամը 9:30-ին, մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի Հրաշափառ Այլակերպութեան տօնին առիթով, Սրբոց Բառասկից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր Ս. Եւ Անմահ

մար Բրիստոսի մօտենալու ենք, հրմով միայն կարելի է բարձրանալ դէպի սրբութեան մակարդակ, դառնալու համար Աստուծոյ սեփականութիւնը, եւ ոչ մեղքին ստրուկը: Ըլլալու ճշմարտութեան վկաներ, եւ ոչ



Պատարագ մատուցեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան:

Ներկայ էին Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներ եւ հաւատացեալ-

ստութեան կողմնակիցներ: Հետեւաբար, կանչուած ենք նոր ոգիով, նոր շունչով եւ ապագայատեսիլ սեւեռումներով թարմացնելու մեր գոյերթը, որպէսզի իրողապէս ապրինք հո-



ներու խումներամ բազմութիւն մը:

Դպրաց Դասը արարողութեան երգեցողութիւնը հոգեխօս առնօգանութեամբ կը մեկնաբանէր: Աղօթաբոյր մթնոլորտը երկիւղած պաշտամունքին հարագատ պատկերը կը պարզէր: Լուսածարաւ հոգիներ եկած էին օրուան խորհուրդին հաղորդ դառնալու: Առաջնորդ Սրբազան Հայրը քարոզին մէջ Այլակերպութեան տօնին մասին հակիրճ բացատրութիւն տուաւ, ապա Աւետարանի հատուածէն մեկնելով կատարեց խորհրդաձօնութիւն, որուն ընդմէջէն հոգեւոր եւ բարոյական արժեքներուն հետամուտ ըլլալ թելադրեց: Սրբազան Հայրը ըսաւ. «Այլակերպութեան տօնը մեզ մէջ իւրաքանչիւրին համար հրաւեր է, աղօթքով պայծառակերպուելու, աստուածամերձ կեանք ապրելու, մեր ներաշխարհը արդարութեամբ մաքրագարողու եւ աղօթքի ճամբով Աստուծոյ հետ մըլտական հաղորդակցութիւն ունենալու: Ըշմարտութեան ճանաչման հա-

գեւոր, իմացական եւ ազգային պայծառակերպութիւն մը»:

Պատարագի աւարտին Դպրաց Դասէն կազմուած թափօրը ընթացաւ դէպի Ազգ. Առաջնորդարանի շրջափակ: Ընթացքին սրբազան հօր ձեռամբ ջուրի սրսկում տեղի ունեցաւ, որպէս տօնին հետ առնչուած



բարեպաշտական սովորութիւն եւ օրհնութիւն բաշխելու արտայայտութիւն: Ապա հնչեց «Կիլիկիա» մաղթերգը:

Սրբազան հօր «Պահպանիչ» աղօթքով արարողութիւնը աւարտին հասաւ:

Խորէն Ըսահանայ Պերթիզեան

ԱԶԳԱՅԻՆ ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐԱՅ ՄԻԱՅԵԱԼ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐՈՒ ԱՄԱԿԵՐԶԻ ՀԱՆՌԵՍ ԵՒ ՎԿԱՅՎԱՆԱՅ ԲԱՇԽՈՒՄ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Ս. Եպս. Չօպուեանի, կազմակերպութեամբ ճեմարանի հոգաբարձութեան եւ տնօրէնութեան, Երկուշաբթի, 22 Յուլիսի երեկոյեան ժամը 7:00-ին, «Սարդարապատ» սրահէն ներս տեղի ունեցաւ Բեսապի Ազգ. Ուսումն. Միաց-

քիս Հետ» բանաստեղծութիւնը, արաբերէն խօսք՝ ԺԲ. կարգի շրջանաւարտ Մարի Փանոսեան, թատերական ներկայացումներ՝ Թ. Եւ ԺԲ. կարգերու աշակերտութեան կողմէ, նուիրուած երեք մեծերուն ծննդեան 150-ամեակին:

Այնուհետեւ ճեմարանի տնօրէն Վարուժան Փանոսեան ներկայա-



եալ ճեմարանի միջնակարգի եւ երկրորդականի 2018-2019-ի ուսումնական տարեշրջանի շրջանաւարտ 11-րդ հունձքին՝ «Գաբրիէլ Ինճեճիկեան» սերունդին աւարտական հանդէսը եւ վկայականաց բաշխումը:

Հանդէսին ներկայ էին գիւղիս երեք համայնքներու հոգեւոր հովիւները, գիւղապետը, ազգային իշխանութեանց եւ միութիւններու ներկայացուցիչները, ծնողներ եւ հանդիսատեսներու հոծ բազմութիւն:

Հանդէսը սկսաւ Սուրբիոյ եւ Հայաստանի քայլերգներով, ապա ներկաները հրաւիրուեցան մէկ վայրկեան յոտնկայս յարգելու սուրիական բանակի նահատակներուն եւ քաղաքային անմեղ գոհերուն յիշատակը:

Բացման խօսք արտասանեց ԺԲ. կարգի շրջանաւարտ Մեղեդի Պետրճիքեան, որ ողջունելէ ետք հանդիսականները յայտնեց, թէ այս տարի Յովհաննէս Թումանեանի, Լեւոն Շանթի եւ Կոմիտաս վարդապետի ծննդեան 150-ամեակն է, նաեւ 95-ամեակն է 1924-ին հիմնուած Միացեալ վարժարանին: Ան դիտել տուաւ, որ սոյն հանդիսութեան գեղարուեստական բաժինը, յիշուած երեք մեծ հայերուն յատկացուած յայտագիրով, կը նուիրուի տեսիլք ունեցող այս վարժարանի հիմնադիրներուն, անոր բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիներուն եւ պատմութեան անցած հին սերունդներուն յիշատակին:

Արաբերէնով բացման խօսք արտասանեց ԺԲ. կարգի շրջանաւարտ Անոթ ճորճ Փանոսեան: Ան ուժ եւ կորով մաղթեց վեմաշուք նախագահ տողը. Պաշար ալ Ասատին, ինչպէս նաեւ յարգանք ու պատիւ յայտնեց սուրիական բանակին:

Գեղարուեստական յայտագիրը կ'ընդգրկէր ասմունք՝ ԺԲ. կարգի շրջանաւարտ Շողակ Ղազարեան, Յովհաննէս Թումանեանի «Հայրենի-

ցուց 2018-2019 ուսումնական տարեշրջանի տեղեկագիրը եւ պարգեւատրեց հայերէն լեզուի առաջնակարգ աշակերտները:

Հանդիսատեսի ուրախութեան ծափողջոյններով բեմ բարձրացան Թ. կարգի ինն եւ ԺԲ. կարգի ութը շրջանաւարտները:

Շրջանաւարտներուն փափաքով, բեմին վրայ տեղի ունեցաւ վերջին գանգը: Չանգը հնչեցուց եւ իր սրտի խօսքը ուղղեց հայերէնի դասատու դոկտ. Շողեր Աշրգեան, շրջանաւարտներուն մաղթելով ուսումնական կեանքին մէջ յաջողութիւն եւ փայլուն ապագայ:

Ապա ԺԲ. կարգը ճեմարանի խորհրդանիշ դրօշը եւ լոյս գիտութեան ու հայեցի կրթութեան անմահ կանթեղը փոխանցեց ԺԲ. կարգին: Վկայականներու տուչութեան համար բեմ հրաւիրուեցան գիւղի հոգեւոր հովիւ Տէր Նարեկ Զինյ. Չերեկեցեան եւ հոգաբարձութեան ատենապետ Նշան Լևոնեան:

Վկայականներու բաշխումէն ետք հուսկ բանք արտասանեց ԺԲ. կարգի շրջանաւարտ Սերժ Տեմիրճեան, որմէ ետք Շիրազ Աթիքեան ընթերցեց աշակերտական խոստումը եւ շրջանաւարտները կրկնեցին գայն՝ խոստանալով արժանի ըլլալ Գաբրիէլ Ինճեճիկեանի աւանդին, հաւատարիմ մնալ ճեմարանի վեհ կոչումին եւ անկէ ստացած հայեցի կրթութեան, խոստացան սիրել գիտելիք եւ գիտութիւն, լեզու եւ մշակոյթ, ազգ եւ հայրենիք:

Հանդէսը իր աւարտին հասաւ շրջանաւարտներուն կողմէ ճեմարանի քայլերգի երգեցողութեամբ, Տէր հօր «Պահպանիչ» աղօթքով եւ բոլոր ներկաներուն «Կիլիկիա» մաղթերգի երգեցողութեամբ: Ապա ներկաները ուղղուեցան շրջափակ իրենց շնորհաւորութիւնները յայտնելու շրջանաւարտներուն:

Թղթակից